



Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից



unieri

United Nations
Interregional Crime and Justice
Research Institute

ԱՊՕՐԻՆԻ
ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ
ԱԿՏԻՎՆԵՐԻ
ԱՌԳՐԱՎՄԱՆ
ԱՐԱԳԱՑՎԱԾ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ
ԿԻՐԱՌՄԱՆ
ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁԸ

Հրաժարում պատասխանատվությունից

Այստեղ արտահայտված կարծիքները, հետևությունները, եզրակացությունները և առաջարկությունները պարտադիր չէ, որ արտացոլեն ՄԱԿ-ի Հանցավորության և արդարադատության հարցերի միջտարածաշրջանային գիտահետազոտական ինստիտուտի (UNICRI), Եվրոպական միության (ԵՄ) կամ որևէ այլ ազգային, տարածաշրջանային կամ միջազգային կազմակերպության տեսակետները: Այս հրապարակման նպատակը UNICRI-ի կամ ԵՄ-ի կողմից նման կարծիքների կամ եզրակացությունների հաստատումը չէ: Սույն հրապարակման մեջ օգտագործված սահմանումները և ներկայացված նյութերը չեն ենթադրում որևէ կարծիքի արտահայտում Միավորված ազգերի կազմակերպության քարտուղարության կողմից՝ որևէ երկրի, տարածքի, քաղաքի, շրջանի իրավական կարգավիճակի կամ դրա սահմանների վերաբերյալ: Այս հրապարակման բովանդակությունը կարող է մեջբերվել կամ վերարտադրվել, եթե նշվում է տեղեկատվության աղբյուրը:

Հեղինակային իրավունք © 2024, Միավորված ազգերի կազմակերպության Հանցավորության և արդարադատության հարցերի միջտարածաշրջանային գիտահետազոտական ինստիտուտ (UNICRI)

Հեռ. + 39 011-6537 111 / Ֆաքս. + 39 011-6313 368

Կայք. www.unicri.org

Էլվիոստի հասցե. unicri.assetrecovery@un.org

Շնորհակալական խոսք

Այս ուղեցույցը պատրաստվել է Եվրոպական միության կողմից արևանության և ընդլայնման բանակցությունների գլխավոր տնօրինության (DG NEAR) միջոցով տրամադրված ֆինանսավորմամբ: 2020 թվականին Եվրոպական հանձնաժողովը և ՄԱԿ-ի Հանցավորության և արդարադատության հարցերի միջտարածաշրջանային գիտահետազոտական ինստիտուտը (UNICRI) համատեղ մեկնարկեցին «Աջակցություն ԵՄ Արևելյան գործընկերության երկրներին՝ ակտիվների վերականգնման գործընթացի ընդլայնման համար» նախաձեռնությունը՝ դժվարին ծրագիր, որի շրջանակում նախատեսվում է բարձր տեխնոլոգիական մակարդակում ամրապնդել աշխատանքային հարաբերությունները Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի պետական մարմինների միջև: Ծրագրի հիմնական նպատակն է կատարելագործել շահառու երկրների՝ կազմակերպված հանցավոր գործունեության հետ կապված ակտիվների հետախուզման, առգրավման և բռնագրավման կարողությունը և տրամադրել փորձագիտական ուղղորդում՝ աջակցելով հանցագործներին իրենց հանցավոր արարքներից ստացված եկամուտներից զրկելու բարոյական հրամայականը կատարելու ուղղությամբ: UNICRI-ն իր երախտագիտությունն է հայտնում Եվրոպական միությանը, ինչպես նաև Արևելյան գործընկերության երկրների պետական մարմիններին՝ նրանց աջակցության և ուղղորդման համար:

Այս զեկույցի հետազոտությունն ու կազմումը գլխավորապես իրականացրել են Իթան Մարթենսը, Ջուլիա Տրավերսոն և UNICRI-ի ակտիվների վերականգնման ծրագրի ղեկավար, իրավական հարցերով ավագ պատասխանատու Ջեյմս Շոուն, լրացուցիչ խմբագրել է Յասմին Չենուքը: Հատուկ շնորհակալություն ենք հայտնում UNICRI-ի հաղորդակցությունների բաժնին, մասնավորապես Մարիաննա Ֆասիոյին՝ գրաֆիկական ձևավորման համար, և Մարինա Մազինիին՝ վերջնական խմբագրման համար:

Առաջաբան

Լեյֆ Վիլարսեն
Տնօրենի պաշտոնակատար UNICRI



Առաջաբան

Փոփոխություններ են ընթանում ակտիվների վերականգնման գործընթացներում՝ պայմանավորված հանցավոր եկամուտների բացառման և արդարության հաղթանակի երաշխավորման հրամայականով: Այս զեկույցում մանրամասն ներկայացված են տարբեր մեխանիզմներ, որոնք պետությունները կարող են օգտագործել՝ ապօրինի ձեռք բերված ակտիվների բռնագանձումն արագացնելու համար՝ ցույց տալով ակտիվների վերադարձի կարևորությունը կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի դեմ պայքարում, և աջակցելով այս մեխանիզմների զարգացմանը:

Ակտիվների վերադարձը պարզապես իրավական գործընթաց չէ. դա բարոյական և տնտեսական անհրաժեշտություն է: Հանցավոր ձեռնարկությունների կամ կոռումպացված պաշտոնյաների կողմից գողացված ակտիվներն արագ և արդյունավետ կերպով վերադարձնելու կարողությունը շատ ավելի լուրջ հետևանքներ ունի: Այն զրկում է հանցագործներին ապօրինի ձեռք բերված եկամուտներից, խափանում է անօրինական գործունեությունը և վերադարձնում է ռեսուրսները դրանց օրինական տերերին, հաճախ՝ պետությանը: Դրանով այն ամրապնդում է օրենքի գերակայությունը, նպաստում է թափանցիկության ապահովմանը և խթանում է հանրային վստահությունը արդարադատության համակարգի նկատմամբ:

Ակտիվների վերադարձի ոլորտում առաջատար դիրքեր զբաղեցնող երկրները ցույց են տվել նորարարական և հուսալի մոտեցումներ այս ուղղությամբ, որոնք օրինակ են ծառայում ուրիշների համար: Միացյալ Թագավորությունը և Միացյալ Նահանգները երկար ժամանակ այս ոլորտում եղել են առաջատար դիրքերում՝ կիրառելով քաղաքացիական ակտիվների բռնագրավման, այլ ոչ թե պատժամիջոցային քաղաքականություն՝ կազմակերպված հանցավորության դեմ արագ պայքարի համար: Իռլանդիայի հարկային և սոցիալական ապահովության մարմինների համատեղ ուժերով ձեռք բերված հաջողությունները ցույց են տալիս միջգերատեսչական համակարգված գործողությունների արդյունավետությունը: Իտալիան նախապատվությունը տվել է ընդլայնված և գույքի վրա հիմնված բռնագրավման պրակտիկային, ինչը ցույց է տալիս ակտիվների վերադարձի ուղղությամբ նոր ռազմավարությունների արդյունավետությունը:

Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիաները՝ UNCAC-ը (ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիա) և UNTOC-ը (ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին կոնվենցիա), հուսալի հիմք են հանդիսանում այս մեխանիզմների համար՝ հավանություն տալով դրանց

ընդունմանը և խրախուսելով գլոբալ համագործակցությունը: Պերուի և Կոլումբիայի նման երկրների օրինակը, որոնք ընդունել են այս պրակտիկան, մեկ անգամ ևս ցույց է տալիս այս մեխանիզմների ներուժը:

UNICRI-ն (ՄԱԿ-ի Հանցավորության և արդարադատության հարցերի միջտարածաշրջանային գիտահետազոտական ինստիտուտ) վճռական է՝ աջակցելու այս պրակտիկաների ընդունմանը՝ խորհրդատվական ծառայությունների, տեխնիկական աջակցության և ուսուցողական ծրագրերի միջոցով, որոնք նախատեսված են իրավական բարեփոխումները խթանելու և կարողությունները բարձրացնելու համար: Օգտագործելով իր բացառիկ դիրքը և մեծ փորձը՝ UNICRI-ն օգնում է երկրներին ստեղծել անհրաժեշտ իրավական մեխանիզմներ և ձեռք բերել փորձ՝ ակտիվների վերականգնման արդյունավետ միջոցառումներ իրականացնելու համար: Քանի որ մենք շարունակում ենք բախվել անդրազգային հանցավորության և կոռուպցիայի զարգացող մարտահրավերներին, այս զեկույցում ներկայացված գաղափարները պետք է ընդունել որպես գործողության կոչ: Բոլոր պետությունները պետք է ընդունեն այս լավագույն փորձը՝ ուղի հարթելով ոչ միայն արդարադատության սկզբունքները պաշտպանության, այլև դեպի ավելի արդար և անվտանգ աշխարհ կառուցելու համար՝ էապես նպաստելով ՄԱԿ-ի 2030 օրակարգի և ԿԶՆ 16-րդ նպատակի իրագործմանը որը կենտրոնացած է հանցավորությունից և բռնությունից զերծ խաղաղ, արդար և ներառական հասարակությունների կառուցումը խթանելու վրա:

Լեյֆ Վիլադսեն

Տնօրենի պաշտոնակատար UNICRI

Հապավումներ

CAB	Հանցավոր ճանապարհով ձեռք բերված ակտիվների վերադարձի հարցերով զբաղվող գործակալություն
CAFRA	Քաղաքացիական ակտիվների բռնագրավման բարեփոխումների ակտ
CARIN	Քեմդենի ակտիվների վերադարձի հարցերով զբաղվող միջգերատեսչական ցանց
CBP	Մաքսային և սահմանային պաշտպանության գործակալություն
DHS	Ներքին անվտանգության վարչություն
ECA	Տնտեսական հանցագործությունների մասին ակտ
EGP	Եգիպտական ֆունտ
EU	Եվրոպական միություն
EUR	Եվրո
FATF	Փողերի լվացման դեմ պայքարի ֆինանսական միջոցառումների հատուկ հանձնախումբ
FIU	Ֆինանսական հետախուզության ստորաբաժանում
FRISCO	Սոցիալական իրավունքների ոտնահարման և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի հիմնադրամ
GBP	Բրիտանական ֆունտ
ICE	Ներգաղթի և մաքսային վերահսկողության ծառայություն
IFF	Ապօրինի ֆինանսական հոսքեր
MLA	Փոխադարձ իրավական օգնություն
NCA	Հանցագործության դեմ պայքարի ազգային գործակալություն
NCB	Առանց մեղադրական դատավճռի
OECD	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
OSINT	Բաց աղբյուրների օգտագործմամբ հետախուզություն/հետաքննություն
PEP	Ազդեցիկ քաղաքական գործիչ
RUA	Անհայտ ծագման ակտիվների բացահայտում
SAE	Հատուկ ակտիվներով զբաղվող միություն
SWBO	Սոցիալական ապահովության բաժնի աշխատակիցներ
UAH	Ուկրաինական գրիվնա
UK	Միացյալ Թագավորություն
UNCAC	Միավորված ազգերի կազմակերպության կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիա

UNICRI	ՄԱԿ-ի Հանցավորության և արդարադատության հարցերի միջտարածաշրջանային գիտահետազոտական ինստիտուտ
UNTOC	ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին կոնվենցիա
US	Միացյալ Նահանգներ
USD	ԱՄՆ դոլար
USSS	ԱՄՆ Գաղտնի ծառայություն
UWO	Անհայտ ծագման գույքի նկատմամբ կալանքի մասին որոշում

Բովանդակություն

1. Ներածություն	9
1.1. Ապօրինի ֆինանսական հոսքերի (ԱՖՀ) սահմանումը և ազդեցությունը	12
1.2. Ակտիվների վերականգնման վ գործընթացը	14
2. Միավորված ազգերի կազմակերպության կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիա և ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին կոնվենցիա – Ակտիվների վերականգնման հետ կապված դրույթներ	16
3. Արագացված բռնագանձման մեխանիզմներ	22
3.1. Գույքի դեմ «In Rem» սկզբունքով բռնագանձում (Քաղաքացիական կազմվ բռնագանձում) – գլոբալ միտում	23
3.2. Վարչական կարգով բռնագանձում	33
3.3. Անհայտ ծագման գույքի նկատմամբ կալանքի մասին որոշումներ (UWOs)	37
3.4. Հարկային վարույթներ	42
3.5. Ակտիվների վերադարձի և սոցիալական ապահովության ծրագրեր	44
3.6. Մինչդատական համաձայնագիր, հաշտեցում կամ այլ բանակցային կարգավորումներ	46
3.7. Ընդլայնված բռնագանձում	49
3.8. Արժեքի վրա հիմնված բռնագանձում (Համարժեք արժեքի բռնագանձում)	52
3.9. Եզակի գույքի հիման վրա բռնագանձում	54
4. Անմեղ երրորդ կողմի շահեր («բարեխիղճ» երրորդ կողմեր)	57
Եզրակացություն	61
Ծանոթագրություն	62

1.

Ներածություն

Ապօրինի ձեռք բերված ակտիվների առգրավումը, բռնագանձումը և վերականգնումը կարևոր մեխանիզմներ են՝ ինչպես կազմակերպված հանցավորության, այնպես էլ կոռուպցիայի դեմ պայքարում շոշափելի ազդեցություն ունենալու համար՝ ինչպես ազգային, այնպես էլ միջսահմանային մակարդակներում: «Փնտրեք շահառուին» արտահայտությունն այլևս հասարակ *կլիշե* չէ, այլ *դևիզ*, որն այժմ ավելի կարևոր նշանակություն ունի, քան ինչ-որ անձի կամ խմբի դեմ քրեական գործ հարուցելը: Բազմաթիվ հանցավոր գործարքների մեջ չներգրավվելու համար ֆինանսական մոտիվացիայի վերացումը ակտիվների վերադարձով զբաղվող շատ մասնագետների կողմից համարվում է ամենաարդյունավետ միջոցը՝ ապօրինի բիզնեսի, կոռուպցիայի և այլ ապօրինի ֆինանսական հոսքերի (ԱՖՀ) դեմ պայքարելու համար: Հանցավոր գործունեության մեջ մտնում են թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը, մարդկանց թրաֆիքինգը, զենքի առևտուրը, փողերի կեղծումը և փողերի լվացումը, ինչպես նաև ոչ հաճախ հիշատակվող (բայց ավելի ակտուալ նշանակություն ունեցող) հարկերից խուսափելը և միջսահմանային առևտրում սխալ հաշիվ-ապրանքագրերի ներկայացումը: ¹

Ազգային և համաշխարհային շուկաների վրա ԱՖՀ-ի աճող ազդեցության պայմաններում գործակալությունները ստիպված են եղել վերանայել ապօրինի գործունեությունը կանխելու իրենց հիմնական մոտեցումները: Իրավապահ և հետախուզական մարմինները սկսել են ընդունել այն փաստը, որ արդյունավետ պայքարը չպետք է հիմնված լինի միայն քրեական դատավճիռների վրա, այլ նաև պետք է ուղղված լինի բազմաթիվ հանցավոր արարքների իրական նպատակին, այն է՝ շահույթ ստանալուն: Ավանդաբար, կեղտոտ ճանապարհով ձեռք բերված ակտիվներից հանցագործներին զրկելու հիմնական մեթոդը եղել է «դատավճռի կայացումից հետո բռնագանձումը», թեև այսպիսի դատավճիռ կայացնելու համար հաճախ տարիներ են պահանջվում:² Թմրամիջոցների միջազգային առևտրի արագ աճով պայմանավորված՝ 1988 թվականին ՄԱԿ-ի «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ» կոնվենցիան (Վիեննայի կոնվենցիա) սահմանեց «դատավճռի կայացումից հետո բռնագրավման» շրջանակը՝ «անօրինական գործունեությամբ զբաղվող անձանց զրկելու համար հանցավոր գործունեության արդյունքում ձեռք բերված եկամուտների շրջանառությունից և այսպերպ չեզոքացնելով այդպիսի գործունեությամբ զբաղվելու հիմնական խթանը»: ³ Կոնվենցիան նպատակ ուներ «վերացնել խնդրի բուն պատճառը», այդ թվում՝ «ստացված հսկայական շահույթը»: ⁴ Հանցավոր գործունեությամբ ձեռք բերված ակտիվների բռնագրավման դեպքերի աճին զուգընթաց, որը պայմանավորված էր կազմակերպված հանցավորության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության աճով, հանցավոր տարրերն ավելի հմտացան իրենց շահույթը թաքցնելու գործում բանկային տարբեր մեքենայություններով:

ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին կոնվենցիայով (UNTOC) հետազայում ընդլայնվեց բռնագրավման հայեցակարգը՝ խրախուսելով պետություններին «դիտարկել հնարավորությունը՝ պահանջելու իրավազանցից ցուցադրել ենթադրյալ հանցանքից ստացված եկամուտների կամ բռնագրավման ենթակա այլ գույքի օրինական ծագումը»:⁵ «Դատավճռի կայացումից հետո բռնագրավման» մեթոդի նկատմամբ աճող աջակցություն ցուցաբերող երկրները ջանում էին ընդլայնել իրենց կարողությունները՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված ակտիվների վերադարձի համար: 2003 թվականին Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայով (UNCAC) սահմանվեց «Առանց մեղադրական դատավճռի (NCB) բռնագանձումը»՝ միջազգային հարթակում կարևորելով գույքի բռնագրավման թույլատրումը՝ «առանց քրեական դատավճռի այն դեպքերում, երբ հանցագործը չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել՝ մահվան, փախուստի, բացակայության կամ օրենքով սահմանված այլ դեպքերում»:⁶ Ազգային մակարդակով առանց մեղադրական դատավճռի բռնագանձումն⁷ արդեն ժողովրդականություն է ձեռք բերել այնպիսի երկրներում, ինչպիսիք են Միացյալ Նահանգները, Անտիգուան և Բարբուդան և Միացյալ Թագավորությունը:

Չնայած միջազգային, տարածաշրջանային և ազգային մակարդակներում առանց մեղադրական դատավճռի առգրավման մեխանիզմների խթանմանը և ապօրինի ֆինանսական հոսքերի կործանարար ազդեցության մասին գիտակցության բարձրացմանը, (օրինակ՝ կոռուպցիոն նպատակներով համապատասխան ենթակառուցվածքներին և այլ համայնքային ծառայություններին ուղղված պետական ակտիվների դուրսգրումը), շատ իրավասու մարմիններ դանդաղում են՝ ապօրինի ձեռք բերված ակտիվներն առգրավելու արդյունավետ եղանակների ներդրման հարցում: Այս լույսի ներքո, ՄԱԿ-ի Հանցավորության և արդարադատության հարցերի միջտարածաշրջանային գիտահետազոտական ինստիտուտը (UNICRI) մշակել է այս ուսումնասիրությունը՝ ապօրինի ձեռք բերված ակտիվների առգրավման արագացված ընթացակարգի կիրառման լավագույն փորձի վերաբերյալ՝ օգնելու համար ինչպես քաղաքականություն մշակողներին, այնպես էլ այս հարցերով գործնականում զբաղվողներին՝ նման գործելակերպեր ընդունելու և իրականացնելու հարցում, որպեսզի ոչ միայն «փնտրեն շահառուին», այլև արդյունավետ կերպով կարողանան կատարել ապօրինի ձեռք բերված ակտիվների առգրավումը:

Այս զեկույցի համար հավաքված տեղեկատվությունը հավաքվել է ոչ միայն կարինետային հետազոտության միջոցով, այլև ակտիվների վերականգնման հարցերով գործնականում զբաղվողների, մասնագետների և քաղաքականություն մշակողների արձագանքների հիման վրա, որոնք ընդգրկում են տարբեր ոլորտներ, այդ թվում՝ առանց մեղադրական դատավճռի բռնագանձում, անհայտ ծագման գույքի

առգրավում, մինչդեռ տական համաձայնագիր (հաշտեցումը), ընդլայնված բռնագանձում, արժեքի վրա հիմնված բռնագանձում, ինչպես նաև ապօրինի ֆինանսական հոսքերի ընդհանուր ոլորտը:

1.1. Ապօրինի ֆինանսական հոսքերի (ԱՖՀ) սահմանումը և ազդեցությունը

Թեև գոյություն չունի «Ապօրինի ֆինանսական հոսքեր» հասկացության բոլորի կողմից ընդունված սահմանում, այն առաջին անգամ ի հայտ է եկել 1990-ականներին՝ կապիտալի արտահոսքը բնութագրելու համար: Դրանից հետո տերմինի նշանակությունն ընդլայնվել է՝ ընդգրկելով գործողությունների և վարքագծի դրսևորման ավելի լայն սպեկտր՝ բարդ և բազմակողմանի մոտեցում պահանջող:⁸ ԱՖՀ տերմինը սովորաբար օգտագործվում է անօրինական ճանապարհով ձեռք բերված ակտիվների անդրասահմանային տեղաշարժը բնութագրելու կամ ավելի պարզ՝ անօրինական կերպով ձեռք բերված գումարները կամ ակտիվները նկարագրելու համար:⁹

Այս ակտիվները կարող են ստեղծվել այնպիսի գործունեության արդյունքում, ինչպիսիք են կոռուպցիան, ապօրինի առևտուրը կամ այլ լուրջ հանցագործությունները, այդ թվում՝ մարդկանց թրաֆիկինգը, թմրամիջոցների վաճառքը, մաքսանենգությունը, կեղծարարությունը, ռեկետը և սահաբեկչության ֆինանսավորումը:¹⁰ Կոռուպցիայի և անօրինական գործունեության հետևանքով կապիտալի կորուստը աղետալի հետևանքներ է ունենում հասարակության զարգացման և նրա հիմնական կարիքների բավարարման վրա, որի հետևանքով մարդկանց վստահությունը քաղաքական ինստիտուտների և օրենքի գերակայության նկատմամբ գնալով նվազում է:

Այսկերպ գողացված միջոցները հանգեցնում են հանրային ենթակառուցվածքների, առողջապահության և կրթության հիմնական մեխանիզմների դեգրադացմանը, ինչի արդյունքում ունենում ենք ավելի քիչ կլինիկաներ, հիվանդանոցներ, դպրոցներ և, հետևաբար, ավելի քիչ ուսուցիչներ, բուժքույրեր, բժիշկներ և այլ մասնագետներ:¹¹

Ապօրինի կերպով ձեռք բերված ակտիվները հաճախ անցնում են ֆինանսական հաստատությունների միջոցով փոխանցումների բարդ գործընթացի միջով՝ ինչպես երկրի սահմաններում, այնպես էլ երկրի սահմաններից դուրս՝ նպատակ ունենալով դժվարացնել դրանց հետևումը և վերադարձը: Շատ երկրներ չունեն գործնական կամ մարդկային ռեսուրսներ՝ այս ակտիվներն արդյունավետ կերպով գտնելու և

վերականգնելու համար: Բացի այդ, շատ երկրներում միայն շատ քիչ դատախազներ, եթե այդպիսիք կան, ունեն դատափորձագիտական պատրաստվածություն՝ ապօրինի ձեռք բերված ակտիվների որոնման համար, իսկ իրավապահ մարմիններն ավանդաբար չափազանց քիչ ռեսուրսներ են հատկացնում՝ ակտիվներին հետևելու կարողություններ ստեղծելու համար: Փոխարենը, նրանք շարունակում են գործել ավանդական պարադիգմի շրջանակներում՝ կենտրոնանալով բացառապես հանցավոր գործունեության մեջ ներգրավված անձանց մեղավորության հաստատման վրա:

Ուժեղ իրավական մեխանիզմները և համարժեք բյուջետավորումը, որոնք հնարավորություն են տալիս քննիչներին և դատախազներին (հաճախ դատափորձագիտական ոլորտի վերլուծաբանների աջակցությամբ) գտնել, առգրավել, բռնագրավել և վերականգնել ակտիվները, կարող են կտրուկ ազդել կազմակերպված հանցավորության և ապօրինի ֆինանսական հոսքերի դեմ պայքարելու երկրի կարողության վրա: Ապօրինի կերպով ձեռք բերված ակտիվների անդրսահմանային հոսքի հետ կապված գործերում օտարերկրյա իրավասության մարմինների կողմից սահմանված ապացույցների և ընթացակարգային չափանիշների տարբերությունները կարող են լրացուցիչ խոչընդոտներ առաջացնել. X երկրի համար հիմնավոր ապացույցը կարող է բավարար չլինել Y երկրի համար:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից 2010-2012 թվականներին ստեղծված և վերադարձված ակտիվների վերաբերյալ անցկացված հետազոտությունը ցույց է տվել, որ ստեղծվել է կոռուպցիոն եղանակով ձեռք բերված մոտ 1,4 միլիարդ ԱՄՆ դոլարի ակտիվներ, մինչդեռ այս ցուցանիշի 11%-ից պակասն է (ընդամենը 147 մլն ԱՄՆ դոլար) փաստացի վերադարձվել ծագման երկիր:¹² Ի պատասխան ակտիվների վերադարձի նման զուսպ թվերի՝ շատ երկրներ ստեղծել են իրավական մեխանիզմներ, որոնք օգնում են իրավապահներին և դատախազներին ավելի արդյունավետ գործել՝ ապօրինի ձեռք բերված ակտիվներն առգրավելու և բռնագրավելու ուղղությամբ, ինչպես նաև ԱՖՀ-ի հետ կապված հարցերում՝ ինչպես ազգային, այնպես էլ միջսահմանային մակարդակներում:

1.2. Ակտիվների վերականգնման գործընթացը

Ակտիվների վերականգնման վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ իրավապահները (ներառյալ դատախազները) և դատական մարմինները կիրառում են մի շարք մեխանիզմներ՝ ապօրինի ձեռք բերված ակտիվները ստեղծելու, բռնագրավելու և վերադարձնելու համար: Այս մեխանիզմները դուրս են ավանդական հայեցակարգի շրջանակից, որի համաձայն ակտիվների վերադարձի համար հարկավոր է հիմնվել բացառապես քրեական դատավճիռների վրա (և սպասել դրանց): Երկրները ստեղծել են ապօրինի ձեռք բերված ակտիվների առգրավման և բռնագրավման արագացված մեխանիզմներ, ինչպիսիք են քաղաքացիական կարգով բռնագանձումը, մինչդատական համաձայնագիրը (հաշտեցում կամ քրեական գործերի բանակցային լուծում), ընդլայնված բռնագանձումը, արժեքի վրա հիմնված բռնագանձումը, ինչպես նաև ընդլայնել են հարկային և մաքսային մարմինների լիազորությունները: Թեև հիմնական իրավական գործընթացը տարբեր է յուրաքանչյուր դեպքում (և տարբեր իրավական համակարգերի դեպքում), գողացված ակտիվների վերադարձի ժամկետները մնում են նույնը:

Հետախուզական տվյալների հավաքման համար ոստիկանների և վերլուծաբանների ներգրավումը հաճախ առաջին քայլն է՝ գողացված ակտիվները վերադարձնելու համար: Այս փուլում պաշտոնատար անձինք հավաքում են ապացույցներ, վերլուծում են տարբեր վերսիսներ, հետևում են փողերի հոսքին և գույքին, որոնք կասկածվում են ապօրինի գործունեության արդյունքում ձեռք բերված լինելու մեջ: Կարող է կատարվել բաց աղբյուրների օգտագործմամբ հետախուզություն/ հետաքննություն (OSINT) և պետական տվյալների բազաների ստուգում (տրանսպարտային միջոցների ռեգիստրներ, հողի սեփականության ռեգիստրներ, բանկային տվյալներ, հարկային և մաքսային տվյալների բազաներ, որոնք կառավարվում են համապատասխան պետական կառույցների կողմից):

Ըստ անհրաժեշտության և առկա ռեսուրսներից կախված (նույնիսկ եթե դրանք սահմանափակ են)՝ կարող են կիրառվել նաև հետաքննության հատուկ մեթոդներ: Այս մեթոդների կիրառման համար հաճախ պահանջվում է գլխավոր դատախազի կամ դատավորի կամ երկուսի թույլտվությունը՝ կախված միջամտության աստիճանից (օրինակ՝ էլեկտրոնային հսկողություն, խուզարկություն և առգրավման հրաման, բանկային հաշվի ստուգման հրաման և այլն):

Մինչ պաշտոնյաները զբաղված են ապօրինի ձեռք բերված ակտիվների հետ կապված հնարավոր դեպքերը հետաքննելու գործով, կարող է անհրաժեշտ լինել ապահովել այդ ակտիվների անվտանգությունը՝ կանխելու կամ սահմանափակելու համար դրանց

տեղաշարժը, ոչնչացումը կամ անհետացումը: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ կարող է որոշում կայացվել այդ ակտիվների սառեցման կամ առգրավման մասին:

Հաշվի առնելով ԱՖՀ-ի և ապօրինի ձեռք բերված այլ ակտիվների բնույթը, ինչպես նաև հանցավոր կազմակերպությունների կողմից կիրառվող մարտավարությունները՝ օտարերկրյա իրավասության մարմիններից ակտիվները թաքցնելու հետ կապված, շատ կարևոր է զարգացնել միջազգային համագործակցությունը (օրինակ՝ օտարերկրյա իրավասության տարածքում այդ ակտիվների սառեցման կամ առգրավման որոշման համար) փոխադարձ իրավական օգնության (MLA) միջոցով: Այս մարտավարությունը մինչև այժմ ոչ բավարար կիրառություն ունի ակտիվների վերականգնման գործընթացում: Որոշ դեպքերում ստեղծվել են անդրսահմանային աշխատանքային խմբեր, որոնք արդյունավետ կերպով կարողացել են ուրիշ երկրում առգրավել և վերադարձնել ապօրինի կերպով ձեռք բերված ակտիվների զգալի մասը:

Բացի ակտիվների առգրավումից, միջազգային համագործակցության անհրաժեշտություն կարող է ծագել նաև փողերի լվացման կամ այլ ԱՖՀ-ի հետ կապված կասկածյալների վերաբերյալ ապացույցներ հավաքելու համար: Անձնական և հանցավոր ցանցերի լայն հասանելիությունը կարող է օգնել այլ ակտիվների բացահայտմանը, այդ թվում՝ ֆիկտիվ ընկերություններին պատկանող: Այս համատեքստում գոյություն ունեցող պաշտոնական անդրսահմանային ցանցերը, օրինակ՝ Ֆինանսական հետախուզության ստորաբաժանումների Egmont Group-ը, կամ ոչ պաշտոնական ցանցերը, օրինակ՝ Քեմդենի ակտիվների վերադարձի հարցերով զբաղվող միջգերատեսչական ցանցը (CARIN), շատ կարևոր դեր ունեն միջսահմանային համագործակցությունը հեշտացնելու գործում:

2.

Միավորված ազգերի
կազմակերպության
կոռուպցիայի դեմ
պայքարի կոնվենցիա և
ՄԱԿ-ի Անդրազգային
կազմակերպված
հանցավորության դեմ
պայքարի կոնվենցիա
– Ակտիվների վերադարձի
հետ կապված դրույթներ

Հանցագործներին հետապնդելու և ապօրինի կերպով ձեռք բերված ակտիվները վերադարձնելու համար բազմազան իրավական մեխանիզմների ստեղծումը կարևոր նշանակություն ունի ինչպես կոռուպցիայի, այնպես էլ կազմակերպված հանցավորության դեմ պայքարում: Այս միջոցները ոչ միայն վերացնում են հանցավոր վարքագծի դրսևորման ֆինանսական շարժառիթները, այլև հանցագործներին զրկում են ապօրինի ճանապարհով ստացված շահույթից: Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայում (UNCAC) ներկայացված է միջոցառումների լայն շրջանակը, որոնք պետությունները կարող են կամ որոշ դեպքերում պարտավոր են իրականացնել՝ կոռուպցիոն գործունեության հետ կապված ակտիվներն առգրավելու համար:

UNCAC-ի հիմնական դրույթները, որոնք վերաբերում են ապօրինի ձեռք բերված ակտիվների վերականգնմանը, ներկայացված են 51-ից 59-րդ հոդվածներում: Դրանք վերաբերում են, օրինակ, ապօրինի ձեռք բերված ակտիվների իրական կամ լիազորված սեփականատերերին բացահայտելու պարտավորություններին (հոդված 52, պար. 1),¹³ պետական պաշտոնյաների ֆինանսական տվյալների բացահայտման արդյունավետ համակարգ ստեղծելու պարտավորությանը (հոդված 52, պար. 5),¹⁴ օտարերկրյա իրավասության մարմիններին ներկայացված բռնագրավման հրամանները (այդ թվում, եթե հնարավոր է, քրեական դատավճռի վրա չհիմնված բռնագրավման հրամանները) ընդունելու և ուժի մեջ դնելու պարտավորությանը (հոդված 54, պար. 1(a) և 1(c)),¹⁵ և (իհարկե) բռնագրավված գույքը տուժող իրավասությանը վերադարձնելու պարտավորությանը (հոդված 57):¹⁶ UNCAC-ը, այնուամենայնիվ, չի արգելում, որպեսզի երկու պետությունների միջև կնքվեն համաձայնագրեր (եթե դրանք օգտակար են)՝ որոշ ակտիվների փոխանցման հետ կապված՝ որպես միջսահմանային համագործակցության խթանման և խրախուսման միջոց (հոդված 57, պար. 5):¹⁷

Միավորված ազգերի կազմակերպության Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի կոնվենցիայի (UNTOC) 12-րդ հոդվածում նշված է.

Մասնակից պետություններն իրենց ներքին իրավական համակարգերի շրջանակներում պետք է ընդունեն այնպիսի միջոցներ իրենց հնարավորությունների սահմաններում, որոնք կարող են անհրաժեշտ լինել՝ բռնագրավելու համար ա) Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտները, որոնք ձեռք են բերվել սույն Կոնվենցիայով նախատեսված հանցագործությունների արդյունքում, կամ գույքը, որի արժեքը համապատասխանում է այդ եկամուտներին, բ) գույք, սարքավորումներ կամ այլ գործիքներ, որոնք օգտագործվում են սույն Կոնվենցիայով նախատեսված իրավախախտումները կատարելու համար: (Պար. 1)

12-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ կետերով նաև պահանջվում է պետություններից ընդունել համապատասխան միջոցներ՝ ապօրինի ձեռք բերված ակտիվների, ինչպես նաև դրանցից ստացված ցանկացած եկամուտների սառեցման և առգրավման համար:

12-րդ հոդվածի ամենակարևոր դրույթներից մեկը, որը վերաբերում է մեր օրերում ակտիվների վերադարձին, ներկայացված է 7-րդ պարբերությունում.

Մասնակից պետությունները կարող են դիտարկել հնարավորությունը՝ պահանջելու իրավազանցից ցուցադրել ենթադրյալ հանցանքից ստացված եկամուտների կամ բռնագրավման ենթակա այլ գույքի օրինական ծագումը այնքանով, որքանով այդ պահանջը համապատասխանում է իրենց ներքին օրենսդրության սկզբունքներին, ինչպես նաև դատական և այլ վարույթներին:

Այս դրույթով, որը բավականին քիչ է կիրառվում շատ պետությունների կողմից, պարտադիր չէ, որ պետություններից պահանջվի կրել ոչ բռնագրավման գործերի հետ կապված ակտիվների կորստի գործով ապացուցման բեռը: Պետությունները կարող են և պետք է շարունակեն պահանջել դատախազներից (ինչպես քրեական, այնպես էլ քաղաքացիական վարույթի ընթացքում) կրել ապացուցման նվազագույն բեռը՝ ցույց տալով, որ առգրավման և բռնագրավման ենթակա ցանկացած ակտիվ այս կամ այն կերպ առնչվում է հանցավորության որևէ ձևի հետ: Այս ստանդարտն ընդունված է շատ իրավական համակարգերում, որոնք ընդունել են քաղաքացիական կարգով բռնագրավման ընթացակարգեր: Այս բեռը բավարարելուց հետո այն տեղափոխվում է յուրաքանչյուրի վրա, ով վիճահարույց գույքի օրինական տիրապետման իրավունքի հայց է ներկայացնում, և նրանից պահանջվում է ապացուցել, որ ակտիվները ձեռք են բերել օրինական և ազնիվ ճանապարհով:

Կարևոր է նշել, որ 12-րդ հոդվածի 7-րդ կետը չի պարտավորեցնում պետություններին պահանջել ֆիզիկական անձանցից ապացուցել իրենց ունեցվածքի օրինական ծագումը քրեական վարույթի ընթացքում: Ինչպես ցույց է տալիս աշխարհի բազմաթիվ իրավական համակարգերի փորձը, ֆիզիկական անձանցից պահանջել, որպեսզի ապացուցեն իրենց ունեցվածքի օրինական ծագումը (այն բանից հետո երբ պետությունը կատարել է իր ապացուցման բեռը), կարելի է նաև քաղաքացիական վարույթներում, որոնք միանգամայն անկախ են քրեական վարույթներից:

Բացի այդ, UNTOC-ի 12-րդ հոդվածի 8-րդ կետով սահմանված է, որ ազգային օրենսդրության որևէ դրույթ չպետք է արգելի երրորդ անձանց, ովքեր ձեռք են բերել այդպիսի գույք, դատարանին ապացուցել, որ դա արել են ազնիվ ճանապարհով, և այդ

դեպքում նրանց ակտիվները ենթակա չեն լինի բռնագրավման: Օրինակ՝ դա կարող է լինել այն դեպքում, երբ ֆիզիկական անձը թմրամիջոցներ վաճառողից ձեռք է բերում մեքենա կամ անշարժ գույք՝ վճարելով դրանց իրական շուկայական արժեքը՝ չունենալով որևէ հիմք՝ կասկածելու, որ վաճառողը ներգրավված է եղել թմրամիջոցների ապօրինի շրջանառության մեջ: Բնականաբար, նման «ազնվությունը» կասկածի տակ կդրվեր և պետք է կասկածի տակ դրվեր, եթե անձը չվճարեր իրական շուկայական արժեքը, կամ ողջամտորեն իմանար, որ վաճառողը ներգրավված է եղել հանցավոր գործունեության մեջ:

Չնայած ակտիվների վերադարձի այս բավականին հուսալի համակարգին, գործնականում այս գործընթացը մնում է բարդ ու անորոշ և շատ երկրներում դեռևս չի համարվում ստանդարտ պրակտիկա: Այս բարդությունը հաճախ պայմանավորված է միջգերատեսչական համակարգման և համագործակցության բացակայությամբ: Որոշ իրավական համակարգերում ոստիկանությունը կարող է դժկամությամբ կիսվել ցուցմունքներով դատախազների հետ, բանկերը (վախենալով կորցնել իրենց արժեքավոր հաճախորդներին) կարող են չուզենալ ոստիկանության կամ դատախազների հետ համագործակցել, իսկ դատավորները կարող են չցանկանալ բանկերից պահանջել բացահայտել փողերի լվացման մեջ կասկածվող անձանց ֆինանսական տվյալները: Բացի այդ, ֆինանսական հետախուզության ստորաբաժանումների (մարմիններ, որոնք հաղորդումներ են ստանում կասկածելի ֆինանսական գործարքների մասին) կողմից տրամադրված տեղեկատվությունը կարող է չլինել համապատասխան (վավեր) ձևաչափով ոստիկանության կամ դատախազության համար: Որոշ իրավական համակարգերում ինստիտուցիոնալ «ազդեցության ոլորտների համար պատերազմները» կարող են խոչընդոտել միջգերատեսչական աշխատանքային խմբերի ստեղծմանը՝ կոռուպցիայի կամ կազմակերպված հանցավորության հետ կապված հիմնական դեպքերը քննելու համար: Բացի այս խնդիրներից, ազգային օրենքներով կարող է պարտականությունների և լիազորությունների համընկնում լինել՝ ապօրինի ձեռք բերված ակտիվների ստեղծման, առգրավման և բռնագրավման, ինչպես նաև առգրավելուց կամ բռնագրավելուց հետո դրանց կառավարման հետ կապված:

Բնականաբար, վերոնշյալ որոշ խնդիրներ է՛լ ավելի են բարդանում նրանց համար, ովքեր չունեն համապատասխան պատրաստվածություն՝ արդյունավետ կերպով առգրավելու և բռնագրավելու ապօրինի ձեռք բերված ակտիվները, ինչպես ազգային, այնպես էլ միջսահմանային մակարդակներում: Շատ ոստիկանական և դատախազական մարմիններ, որոնք հաճախ կենտրոնացած են բացառապես հանցավորության մեջ կասկածվող անձանց վրա, պարզապես չունեն տեխնիկական գիտելիքներ, թե ինչպես պետք է հետևել ապօրինի ձեռք բերված ակտիվներին և դրանք բացահայտել: Այս բացը համընկնում է վերից վար ինստիտուցիոնալ

առաջնահերթությունների բացակայության հետ՝ այդպիսի տեխնիկական գիտելիքների ձեռք բերման և կիրառման համար:

Վերջապես, թեև մասնագետների համար ժամանակակից մեթոդները կարող են հասանելի լինել յուրաքանչյուր երկրում, օրենսդիրները (և նրանց աշխատակազմը) դեռ պետք է հասկանան որոշակի իրավական մեխանիզմների արժեքն ու անհրաժեշտությունը (օրինակ՝ քաղաքացիական կարգով բռնագրավման), որոնք հնարավորություն կտան այնպիսի մարմինների, ինչպիսիք են ոստիկանությունը, դատախազությունը և դատավորները, կատարել իրենց աշխատանքն ավելի արդյունավետ կերպով:¹⁸

Ակտիվների փոխանցում

UNTOC-ի 14-րդ հոդվածում հատուկ ուշադրություն է դարձվում կոնկրետ դեպքում կամ սովորական հիմունքով ակտիվների փոխանցման վերաբերյալ համաձայնագրերի կնքմանը, ինչը կարող է նպաստել միջազգային համագործակցության խթանմանը (մասնավորապես, երբ բռնագանձումը տեղի է ունենում իրավապահ մարմինների համակարգված գործողությունների շրջանակներում):¹⁹ Վերադարձված ակտիվների փոխանցումը կարող է տեղի ունենալ նաև ազգային մակարդակով: Օրինակ, Միացյալ Թագավորությունում (Մեծ Բրիտանիա) ակտիվները բաշխվում են իշխանությունների միջև, որոնք նպաստել են դրանց վերականգնմանը, մինչդեռ Իտալիայում դրանք հաճախ փոխանցվում են հասարակական կազմակերպություններին՝ սոցիալական ծրագրերում կիրառման համար:

Փողերի լվացման դեմ պայքարի ֆինանսական միջոցառումների հատուկ հանձնախմբի (FATF) ընդունած առաջարկներ.²⁰

FATF-ի 40 առաջարկները կարևոր գործիք են կոռուպցիայի և փողերի լվացման դեմ գլոբալ պայքարում, որոնք ներկայացնում են այն համապարփակ շրջանակը, որտեղ երկրները կարող են դրանք կիրառել տարբեր իրավական և գործառնական համակարգերում:

Առաջարկ 4.

Երկրները պետք է ունենան այնպիսի միջոցներ կամ գործիքներ, որոնք թույլ կտան բռնագրավել այդ եկամուտները՝ առանց քրեական դատավճռի անհրաժեշտության

(առանց մեղադրական դատավճռի բռնագանձում), կամ որոնք պահանջում են իրավագանցից ցուցադրել բռնագրավման ենթակա գույքի օրինական ծագումը այնքանով, որքանով այդ պահանջը համապատասխանում է իրենց ներքին օրենսդրության սկզբունքներին:

Առաջարկ 38.

Երկրները պետք է երաշխավորեն, որ իրավասու են օպերատիվ գործողություններ ձեռնարկել՝ ի պատասխան օտարերկրյա պետությունների՝ [ապօրինի ձեռք բերված ակտիվները] բացահայտելու, ստեղծելու, առգրավելու և բռնագրավելու հայցերի: Այս իրավասության մեջ պետք է մտնի առանց մեղադրական դատավճռի բռնագրավման վարույթի և համապատասխան ժամանակավոր միջոցների հետ կապված հայցերին արձագանքելու հնարավորությունը, եթե դա չի հակասում իրենց ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին:

38-րդ առաջարկի մեկնաբանություն.

Առանց մեղադրական դատավճռի բռնագրավման վարույթի վրա հիմնված համագործակցության հարցումների համատեքստում երկրները պարտադիր չէ, որ ունենան այդ հայցերի հիման վրա գործելու իրավասություն, սակայն պետք է ունենան դա անելու կարողություն, առնվազն այն դեպքերում, երբ հանցագործը անհասանելի է այնպիսի պատճառներով, ինչպիսիք են մահը, փախուստը, բացակայությունը կամ երբ հանցագործի ինքնությունն անհայտ է:

3.

Արագացված
բռնագրավման
մեխանիզմներ

3.1. Գույքի դեմ «In Rem» սկզբունքով բռնագանձում (Քաղաքացիական կազով բռնագանձում) – գլոբալ միտում

Ակտիվների բռնագանձման համար գոյություն ունեն միջազգայնորեն կիրառվող մի քանի եղանակներ՝ քրեական կարգով բռնագանձում և քաղաքացիական կամ վարչական կարգով բռնագանձում: Բավարար սպացույցներ հավաքելուց հետո հարուցվում է դատական վարույթ, առավել հաճախ՝ քրեական գործի տեսքով: Ավանդական ընթացակարգով սովորաբար նախատեսվում է քրեական գործի հարուցում կոնկրետ անձի դեմ, որին ուղեկցում է այդ անձի ակտիվների սառեցման կամ առգրավման վերաբերյալ քրեական գործերով դատավորի կողմից կայացված որոշումը (թեև սա շատ հազվադեպ է հանդիպում): Թեև քրեական արդարադատության ոլորտում գոյություն ունեն ակտիվների առգրավումն ու բռնագանձումն արագացնելու մի քանի եղանակներ, այդ թվում՝ մինչդատական համաձայնագիրը կամ հաշտեցումը, այս ոլորտում կարող են կիրառվել լրացուցիչ եղանակներ (չնայած դրանք կարող են այնքան էլ չարագացնել գործընթացը)՝ առնվազն ընդլայնելու համար հանցավոր գործունեության մեջ ներգրավված անձանցից գույքի առգրավման ու բռնագրավման հետ կապված դատախազների և դատարանների լիազորությունները: Դա կարող է ներառել «ընդլայնված բռնագրավման» և «արժեքի վրա հիմնված բռնագրավման» եղանակների կիրառումը, որոնց մասին ավելի ուշ քննարկվում է այս զեկույցում:

Սակայն այժմ իրավական մարմիններն ավելի հաճախ են ընդունում և կիրառում *գույքի դեմ «in rem»* սկզբունքով բռնագրավման վարույթներ, որտեղ ակտիվները ներկայանում են որպես «ամբաստանյալ» (և ցանկացած ոք, ով այդ ակտիվների օրինական տիրապետման իրավունքի հայց է ներկայացնում (օրինակ՝ գրանցված սեփականատերը), վարույթի մասին ծանուցում է ստանում): Այսպիսի վարույթում դատարանը իրավասու չէ որևէ մեկին հանցագործության համար դատապարտելու կամ որևէ մեկին ազատությունից զրկելու: Ակտիվները սառեցվում կամ առգրավվում են, և միակ որոշումը, որը պետք է կայացվի, այն է, թե արդյոք խնդրո առարկա ակտիվները կապված են հանցավոր գործունեության հետ, թե ոչ: «*In rem*» վարույթների դեպքում ուշադրություն չի դարձվում զուգահեռ ընթացող կամ նախկին քրեական գործերին:

Ակտիվների վերադարձի վերոնշյալ ձևերն ունեն նույն նպատակներն ու հիմնավորումները, այն է՝ պետության կողմից ապօրինի ծագման ակտիվների բռնագանձում և հանցագործներին հանցավոր գործունեության արդյունքում ստացված շահույթից զրկում: Տեսականորեն սա հանցագործներին հետ է պահում հանցավոր վարքագիծ դրսևորելուց՝ միաժամանակ փոխհատուցում տալով զոհերին՝ լինեն դրանք ֆիզիկական անձինք, թե պետությունը: Քրեական կարգով առգրավման և *in rem* կամ

քաղաքացիական կարգով բռնագրավման միջև հիմնական տարբերությունը կայանում է այն ընթացակարգի մեջ (և հաճախ արագության մեջ), որով ակտիվները բռնագրավվում են: Քրեական կարգով բռնագրավման համար պահանջվում է քրեական վարույթ և դատավճռի կայացում, որոնց կատարման համար հաճախ տարիներ են հարկավոր, մինչդեռ քաղաքացիական կարգով բռնագրավման վարույթի դեպքում ակտիվների վերջնական բռնագրավման վերաբերյալ որոշումը հաճախ կայացվում է մեկ տարուց պակաս ժամկետում:

In rem կամ քաղաքացիական կարգով բռնագրավման վարույթում պետությունը շարունակում է կրել ապացուցման բեռը՝ բայց հաճախ ավելի ցածր ստանդարտներին հետևելով: Ընդհանուր իրավունքի շատ իրավական համակարգերում ստանդարտը հաճախ գործում է այն սկզբունքով, որ ակտիվները «ավելի հավանական է», որ կապված են հանցավորության ինչ-որ ձևի հետ, այսինքն՝ առաջնորդվում են հավանականությունների հավասարակշռման ապացուցողական չափանիշով:²¹



Քրեական կարգով առգրավում
Նկարագրություն

- Պահանջում է անձի վերաբերյալ դատավճռի կայացում:
- Բռնագրավման վերաբերյալ որոշում է կայացվում միայն այն դեպքում, երբ անձը դատապարտվում է հանցագործության համար:
- Ապացուցման բարձր ստանդարտ, որի դեպքում պետք է հիմնավորվի անձի հանցավոր մեղքը և հնարավոր լինի որոշում կայացնել այդ անձին ազատությունից զրկելու վերաբերյալ, սակայն պարտադիր չէ հիմնավորել գույքի կապը հանցավորության հետ:
- Հաճախ մի քանի տարի է պահանջվում բռնագրավման վերաբերյալ որոշում

Քաղաքացիական կարգով բռնագրավում
Նկարագրություն

- Դատվճռի կայացում՝ հիմք ընդունելով միայն ակտիվների կապը հանցավորության որևէ ձևի հետ:
- Չի պահանջվում (չի թույլատրվում) դատավճիռ կայացնել ակտիվի սեփականատիրոջ հանցավորության վերաբերյալ:
- Ապացուցման ավելի ցածր ստանդարտ, «հավանականությունների հավասարակշռման ապացուցողական չափանիշ» – Ավելի հավանական է, որ այդ ակտիվները կապված են հանցավորության որևէ ձևի հետ:
- Բռնագրավման վերաբերյալ որոշման կայացման համար հաճախ պահանջվում է երկու տարուց պակաս ժամկետ

Քանի որ դատարանը իրավասու չէ քաղաքացիական կարգով բռնագրավման գործով որևէ մեկին դատապարտել հանցագործության համար կամ որևէ մեկին զրկել ազատությունից, լավ հիմքեր կան թուլացնելու ապացուցման բեռը, երբ պարզապես կարելի է բավարարվել որոշ ակտիվների հավանական ծագման մասին որոշում կայացնելով:²²

Քաղաքացիական կարգով բռնագանձումը դատախազներին հնարավորություն է տալիս նաև առանձին քաղաքացիական վարույթ հարուցել, եթե ի հայտ են գալիս այլ տեխնիկական կամ ընթացակարգային պատճառներ, որոնք խոչընդոտում են քրեական գործի հետագա ընթացքին: Դա կարող է լինել, օրինակ, ամբաստանյալի մահը, արդարադատությունից նրա փախուստը, դատավարությանը մասնակցելուց խուսափումը կամ, ինչպես նշված է UNCAC-ի 54(1)c հոդվածում, «այլ համարժեք դեպքեր»: Այլ համարժեք դեպքերի օրինակներ. Երբ ամբաստանյալը կարող է զգալի քաղաքական ազդեցություն ունենալ, քրեական հետաքննությունը դարձնել անհնարին կամ անիրատեսական, կամ երբ ակտիվների սեփականատերը կարող է անհայտ լինել (օրինակ՝ առաքիչը կարող է բռնվել կասկածելի ակտիվներ տեղափոխելիս, իսկ սեփականատիրոջը հնարավոր չէ բացահայտել):²³

Հնարավոր են այնպիսի դեպքեր, երբ ամբաստանյալը քրեական հետապնդումից կարող է «անձեռնմխելի» լինել: Սակայն քրեական հետապնդումից անձեռնմխելիությունը չպետք է խոչընդոտի անօրինական ճանապարհով ձեռք բերված ակտիվների դեմ միջոցներ ձեռնարկել: Այս կապակցությամբ UNCAC-ն առաջարկում է, որպեսզի մասնակից պետությունները գտնեն «համապատասխան հավասարակշռություն ցանկացած անձեռնմխելիության կամ իրավական արտոնությունների միջև, որոնք տրված են պետական պաշտոնյաներին իրենց գործառնությունների կատարման համար և, անհրաժեշտության դեպքում, արդյունավետորեն հետաքննեն իրավախախտումները և դատավճիռ կայացնեն դրանց վերաբերյալ՝ սույն Կոնվենցիայի համաձայն»:²⁴

Այս դեպքերում կարող են կիրառվել քաղաքացիական կարգով բռնագրավման կամ առգրավման գործիքներ, քանի որ դա «*in rem*» գործողություն է՝ ապօրինի ձեռք բերված գույքի դեմ, այլ ոչ թե անձի, և/կամ քրեական դատավճիռը անհնար է կամ հնարավոր չէ:

Սակայն հարկ է նշել, որ *in rem* քաղաքացիական կարգով բռնագրավմամբ իրավական հիմքերի առկայությունը չպետք է կախված լինի վերոնշյալ հանգամանքներից: *In rem* վարույթն օգտակար է, երբ հանցագործն արդարացվել է քրեական հանցագործության գործով՝ բավարար ապացույցներ չլինելու պատճառով, օրինակ՝ որոշ ընդհանուր իրավունքի իրավական համակարգերում գործում է ապացուցման «ողջամիտ

կասկածից վեր» սկզբունքը: Թեև կարող են բավարար ապացույցներ չլինեն՝ քրեական դատավճռի կայացման համար, սակայն դրանք կարող են բավարար լինել հավանականությունների հավասարակշռման ապացուցողական չափանիշով, որ ակտիվները ձեռք են բերվել հանցավոր գործունեության արդյունքում: Սա թույլ է տալիս դատարաններին տարանջատել անձի նկատմամբ դատավճիռը գույքի նկատմամբ դատավճիռից՝ վերջինիս վճռի համար պահանջվող ապացուցման ավելի ցածր բեռով, և գործել այնպես, ինչպես թելադրում են արդարադատությունն ու բարոյական հրամայականները՝ վերադարձնել հանցավոր գործունեությամբ ձեռք բերված ակտիվները:

Շատ իրավական համակարգերում *in rem* վարույթները կրճատում են ակտիվների բռնագրավման վերաբերյալ որոշում կայացնելու ժամանակը, որը տևում է մի քանի տարի (ինչպես երևում է սովորական քրեական գործերում) մինչև մի քանի ամիս: Սա բարձրացնում է հանրության վստահությունը արդարադատության համակարգի արդյունավետության նկատմամբ, մասնավորապես՝ ակտիվների վերադարձի հարցում, և ավելի մեծ հնարավորություն է տալիս ցույց տալու, որ վերադարձված ակտիվներն ուղղվում են երկրի զարգացման համար կարևոր ոլորտների առաջնահերթ կարիքները հոգալու համար՝ դրանով իսկ ապացուցելով, թե արդարադատության համակարգը ինչպես է օգուտ տալիս քաղաքացիներին:

Չնայած *in rem* արագացված կարգով վարույթների պարզությանը, դատախազները կարող են խնդիրներ ունենալ՝ ակտիվների և դրանց հանցավոր ծագման միջև կապի հիմնավոր ապացույցներ գտնելու հարցում: Շատ իրավական համակարգերում ապացուցման բեռը մնում է պետության (դատախազների) վրա՝ ցույց տալու այս կապը:

Բացի այդ, ապացուցման կարիք ունեցող փաստերի շրջանակը կարող է տարբեր լինել: Այն իրավական համակարգերը, որոնք պահանջում են ակտիվների և հանցավորության միջև կապի ապացույց կոնկրետ ամսաթվին, հաճախ անարդյունավետ են դարձնում *in rem* վարույթները: Դա պայմանավորված է նրանով, որ շատ հետաքննություններ միշտ չեն կարող բացահայտել կոնկրետ ամսաթվին կոնկրետ հանցագործության արդյունքում ձեռք բերված ակտիվների միջև անմիջական կապը:

Մյուս կողմից, այլ իրավական համակարգեր որդեգրել են ավելի հարմար մոտեցում՝ պահանջելով պետությունից ապացուցել, որ ակտիվներն ընդհանրապես կապված են հանցավորության հետ: Սա կարող է ուղեկցվել ապացույցների հետ, որոնք ցույց են տալիս, որ ակտիվների սեփականատերը չունի եկամտի որևէ այլ հայտնի աղբյուր: Այս մոտեցումն ապահովում է ճիշտ հավասարակշռություն, հատկապես այն դեպքերում, երբ որոշումը չի ենթադրում քրեական պատասխանատվության ենթարկել որևէ մեկին:

Շատ դեպքերում ապօրինի ձեռք բերված ակտիվները պահվում են կամ փոխանցվում են մեղսակից կամ անտեղյակ երրորդ անձանց (օրինակ՝ ֆիկտիվ ընկերություններին, մտերիմներին, ընտանիքի անդամներին կամ այլ ընկերներին), ինչը դժվարացնում է քրեական գործի հարուցումը այդպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձանց նկատմամբ (որոնք լավագույն դեպքում կարող են միայն երկրորդական մասնակցություն ունենալ բուն հանցավոր արարքին): Այս սցենարները գործնականում հետ են պահում դատախազներին քրեական գործ հարուցելուց, և այսկերպ նպաստում են, որպեսզի այդ ակտիվների սեփականատերերը անարդարացի շահույթ ունենան: In rem կամ քաղաքացիական կարգով բռնագրավման, ինչպես նաև ակտիվների նկատմամբ վարույթի դեպքում դատախազները կարող են չբախվել վերոնշյալ իրավիճակներին:

Բացի այդ, շատ իրավական համակարգերում հնացած իրավական դրույթները դեռևս թույլ են տալիս ապօրինաբար ձեռք բերված ակտիվները փոխանցել ժառանգներին սեփականատիրոջ մահից հետո: Թեև սա կարող է անսպասելի հաջողություն լինել ժառանգների համար, այն հակասում է այն գերակա սկզբունքին, որ ոչ ոք չպետք է օգուտ ստանա հանցավոր գործունեությունից:

Քաղաքացիական կարգով բռնագանձումը Պերուում

«*Extinción de Dominio*» իրավական հայեցակարգը²⁵

2018 թվականի օգոստոսին Պերուն օրենք ներկայացրեց իր իրավական ապարատում՝ քաղաքացիական կարգով բռնագրավման նոր ձև սահմանելու վերաբերյալ: Այս իրավական մեխանիզմը, որը հայտնի է որպես *extinción de dominio* (թարգմանաբար նշանակում է «տիրապետման վերացում») թույլ է տալիս պերուական դատարաններին որոշումներ կայացնել ակտիվների վերադարձի վերաբերյալ այնպիսի հանգամանքներում, երբ ակտիվների սեփականատերը չի կարող դատապարտվել կոնկրետ հանցագործության համար: ²⁶ Պերուական դատարանները կարող են կիրառել քաղաքացիական կարգով բռնագանձում միայն այն դեպքում, երբ հնարավոր չէ քրեական դատավճիռ կայացնել՝ այս մոտեցումը դարձնելով ավելի նպատակաուղղված՝ համեմատած այլ մեխանիզմների հետ: ²⁷ Պերուում *extinción de dominio*-ի ներդրման արդյունքում ստեղծվել է մասնագիտացված դատախազություն և դատարաններ, հրավիրվել են դատավորներ, որոնք զբաղվում են այս գործերով: ²⁸

Մոշե Ռոտշիլդի գործը

Այս գործում ներգրավված ակտիվները ստացվել են Ալբերտո Ֆուխիմորիի կառավարության օրոք գերագնահատված ՄիԳ-29 և Մուխոյ Սու-25 ինքնաթիռների գնման պայմանագրերից: Բանկային հաշվի իրական սեփականատերը ճանաչվել է գերմանա-իսրայելցի գործարար Մոշե Ռոտշիլդը, ով փախել էր Իսրայել՝ խուսափելու համար Պերուի արդարադատությունից և հետապնդումից: Իսրայելը չի արտահանձնել Ռոտշիլդին, և Պերուի իշխանությունները, հետևաբար, չեն կարողացել նրա դեմ քրեական գործ հարուցել: Կիրառելով *extinción de dominio* (քաղաքացիական կարգով բռնագանձում) օրենքը՝ դատարանը որոշել է, որ Ռոտշիլդը ներգրավված է եղել Բելառուսի և Պերուի միջև զենքի վաճառքի կոռուպցիոն պայմանագրերից միջնորդավճարներ ստանալու մեջ, որի արդյունքում բռնագրավման վերաբերյալ որոշում է կայացվել: Ի վերջո, Պերուի կառավարությանը հաջողվել է բռնագրավել մոտ 8,5 միլիոն ԱՄՆ դոլարի արժողությամբ ակտիվներ:²⁹

Ընդհանուր մեկնաբանություններ Պերուում քաղաքացիական կարգով բռնագրավման կիրառման վերաբերյալ

Պերուի քաղաքացիական կարգով բռնագրավման օրենքը, որը մասամբ հիմնված է Կոլումբիայի նմանատիպ օրենքի վրա, ընդօրինակվել է Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում, ինչի արդյունքում հաջողվել է բազմաթիվ ակտիվներ վերադարձնել, որոնք ԱՄՆ դոլարով հարյուրավոր միլիոններ են գնահատվում ամբողջ տարածաշրջանում: Միայն Պերուում 2019-ից 2021 թվականներին ավելի քան 25 միլիոն ԱՄՆ դոլարի ակտիվներ են վերադարձվել երկրում ընդունված քաղաքացիական կարգով բռնագրավման մասին օրենքով:³⁰ Օրենքը դատախազներին հնարավորություն է տալիս վերադարձնել ակտիվները, նույնիսկ եթե հանցագործության մեջ կասկածվողը մահանում է՝ նախքան դատավճռի կայացումը կամ փախչում է այլ իրավասության տարածք, և դա թույլ է տալիս դատախազներին վերադարձնել ապօրինի ձեռք բերված ակտիվները՝ անկախ նրանից, թե ով է դրանք տիրապետում:

Ակտիվների վերադարձի ժամանակակից գործընթացի համատեքստում հիմնական խոչընդոտը (որը պայմանավորված է այնպիսի հանգամանքներով, ինչպիսին

հանցագործի փախուստն է օտարերկրյա իրավասության տարածք) շատ պետությունների դժկամությունն է ընդունելու այլ պետությունների դատարանների կողմից ներկայացված քաղաքացիական կարգով բռնագրավման վերաբերյալ որոշումները, ինչպես կարգադրված է UNCAC-ի և UNTOC-ի կողմից: Այս բացը լրջորեն խոչընդոտում է անդրսահմանային համագործակցությանը ակտիվների վերադարձի հարցում և թույլ է տալիս, որպեսզի անօրինական կերպով ձեռք բերված ակտիվները շարունակեն անպատիժ շրջանառվել այն պետություններում, որտեղ հանցագործները փախել են: Ցավոք, չնայած Եվրոպական հանձնաժողովի որոշ ջանքերին, Եվրոպական Միության (ԵՄ) շատ պետություններ դեռևս հետ են մնում քաղաքացիական կարգով բռնագրավման մասին օրենքներ ընդունելու և քաղաքացիական բռնագրավման կարգով օտարերկրյա դատարանների որոշումները կիրառելու հարցում: ³¹ Այլ տարածաշրջաններ նույնպես, ինչպիսիք են Մերձավոր Արևելքը և Հյուսիսային Աֆրիկան, դեռևս չեն ընդունել քաղաքացիական կարգով բռնագրավման մասին օրենքներ, թեև որոշ երկրներ, օրինակ՝ Թունիսը, պատրաստել են օրինագծեր այս հարցի հետ կապված:

Իռլանդիա – Քաղաքացիական կարգով բռնագրավման մոդելը Եվրոպայում

Իռլանդիան դրական բացառություն է Եվրոպական Միությունում, որը համաշխարհային առաջատարն է քաղաքացիական կարգով բռնագրավման ընթացակարգի, ինչպես նաև բռնագրավման արագացված մեխանիզմների այլ ձևերի կիրառմամբ, օրինակ՝ լիազորված հարկային և սոցիալական ապահովության մարմինների միջոցով: Իռլանդիայում քաղաքացիական կարգով բռնագանձումը նշանավորեց «ռեակտիվ» բռնագրավման մոդելից անցումը դեպի ավելի «պրոակտիվ» կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ռազմավարություն:³²

«Հանցավոր գործունեության արդյունքում ձեռք բերված եկամուտների մասին» օրենքով (ընդունվել է 1995 թվականին և փոփոխվել է 2005 թվականին) Իռլանդիան հանցավոր ճանապարհով ստացված եկամուտը սահմանել է որպես ցանկացած գույք, որը ձեռք է բերվել հանցավոր գործունեության արդյունքում կամ կապված է այդ գործունեության հետ՝ ներառյալ օտարերկրյա գույքը և օտար երկրում հանցավոր եղանակով ստացված եկամուտները, և այս սահմանումներն օժտված են հետադարձ ուժով:

Քաղաքացիական կարգով բռնագրավման վարույթում Իռլանդիան ընդունում է այնպիսի ապացույցներ, որոնք հիմնված են ասեկոսների վրա (օրինակ մտահոգ քաղաքացիների կամ գաղտնի իրազեկիչների հաղորդումների), որոնք թույլ են տալիս

արժեքավոր տեղեկություններ հավաքել, հատկապես, երբ վկաներին կարող են վախեցնել, և նրանք հրաժարվեն պաշտոնական ցուցմունք տալուց:

1996 թվականին Իռլանդիան ստեղծեց Հանցավոր ճանապարհով ձեռք բերված ակտիվների վերադարձի հարցերով զբաղվող գործակալությունը (CAB),³³ որը Իռլանդիայի ոստիկանությունից անկախ է գործում: CAB-ի նպատակն է հետևել, որպեսզի ֆիզիկական անձինք չօգտվեն հանցավոր գործունեությունից ստացված որևէ ակտիվից՝ ուշադրությունը կենտրոնացնելով բացառապես ակտիվների վրա: Սա ինքնին պետք է արժեքավոր մոդել լինի այլ երկրների համար, որին նրանք պետք է հետևեն: Օժտված լինելով հանցավոր ճանապարհով ձեռք բերված ակտիվները բռնագրավելու և դրանց անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ միջոցները ձեռնարկելու իրավասությամբ՝ CAB-ը համագործակցում է ազգային ոստիկանության և այլ մարմինների պաշտոնյաների հետ՝ ապահովելու համար իր հիմնական առաքելության, այն է՝ ապօրինի ձեռք բերված ակտիվները հայտնաբերելու, առգրավելու և բռնագրավելու իրականացմանը: CAB-ի հաջողությանը նպաստող հիմնական գործոնը նրա հասանելիությունն է բազմաթիվ գործակալությունների տվյալների բազաներին, այդ թվում՝ Եկամուտների ծառայության և Սոցիալական ապահովության մարմնի տվյալներին: Տվյալների փոխանակումը փոխադարձ սկզբունքով է. օրինակ՝ Եկամուտների մարմինը CAB-ին տրամադրում է տվյալներ հայտարարագրված եկամուտների վերաբերյալ, իսկ CAB-ը փոխադարձաբար փոխանցում է իր հետաքննությունների ընթացքում ստացված համապատասխան տեղեկատվությունը Եկամուտների մարմնին՝ օգնելով վերահսկել հարկային կարգապահության պահպանումը: Նմանատիպ համագործակցություն գոյություն ունի CAB-ի և Սոցիալական ապահովության մարմնի միջև, որը վերջինիս օգնում է պայքարել սոցիալական ապահովության ոլորտում խարդախությունների դեմ:³⁴ CAB-ի կամ դրա հետ համագործակցող աշխատողների մեծ մասը գործում է անանուն անվտանգության նկատառումներից ելնելով:

Հանցավորության, այդ թվում՝ խարդախության հետ հնարավոր կապ ունեցող ակտիվները հայտնաբերելուց հետո CAB-ի աշխատակիցը դիմում է ներկայացնում Դատարան (ոչ քրեական վարույթի շրջանակներում)՝ խնդրո առարկա ակտիվների տնօրինումն արգելող որոշում կայացնելու համար: Գործակալության աշխատակիցը, հիմնվելով քաղաքացիական գործով վարույթի ստանդարտների վրա (հավանականությունների հավասարակշռման ապացուցողական չափանիշի, այսինքն՝ «ավելի հավանական է» սկզբունքի վրա), պետք է սահմանի՝ արդյոք ակտիվները հանդիսանում են անմիջականորեն կամ ոչ անմիջականորեն հանցավոր գործունեությունից ստացված եկամուտներ՝ առանց նախադեպային հանցավորության հետ անմիջական կապն ապացուցելու անհրաժեշտության: Բնականաբար, ակտիվների սեփականատերը պահպանում է հակառակն ապացուցող ապացույցներ

ներկայացնելու իրավունքը ցանկացած այլ անձի հետ միասին, որը հավակնում է, օրինակ, գույքի սեփականության կամ մասնակի սեփականության իրավունքը: Սակայն եթե բողոքարկումն օգուտ չտա, դատարանը կանցնի բռնագրավման վերաբերյալ որոշման կայացմանը՝ հաճախ նաև անձի տիրապետման տակ գտնվող ցանկացած այլ գույքի բացահայտման վերաբերյալ որոշում կայացնելով: Վերջին քայլը գույքի բռնագանձումն է ու պետությանը փոխանցումը: 2021 թվականին Իռլանդիայի արդարադատության նախարարը ստեղծեց Հասարակական ապահովության ինովացիոն հիմնադրամը, որը պետք է օգտագործեր CAB-ի կողմից հայտնաբերված հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտները՝ հասարակական ապահովությանն աջակցող նորարարական նախագծեր ֆինանսավորելու համար՝ այսկերպ ցույց տալով իրավապահ մարմինների գործունեության և հասարակական ապահովության բարելավման միջև ուղիղ կապը:³⁵

Այս մեխանիզմը նշանակալից հաջողություններ է գրանցել. 1996-2020 թվականներին CAB-ը վերադարձրել է մոտավորապես 199 միլիոն եվրո, որից 161 միլիոնը կապված է եղել չվճարված հարկերի հետ, 32 միլիոնը՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների, և 5 միլիոն եվրո վերադարձվել է երկրի սոցիալական ապահովության համակարգի բացահայտված չարաշահումներից:³⁶

Կոլումբիա. Առաջին երկիրը, որը Լատինական Ամերիկայում ներդրել է առանց մեղադրական դատավճռի բռնագանձումը

Կոլումբիայի «*extinción de dominio*» օրենքը, որը Պերուում համանման օրենքի նախադրյալն է, առաջին անգամ ներդրվել է 1996 թվականին (օրենք 333/1996), Պաբլո Էսկոբարի մահից հետո, և դրանից հետո մի քանի անգամ փոփոխվել է: Այն համարվում է «Կոլումբիական կառավարության ամենաուժեղ զենքը կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության դեմ»,³⁷ քանի որ այն հնարավորություն է տալիս պետությանը բռնագրավել հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտները նույնիսկ հանցագործի մահից հետո՝ հիմք ընդունելով անձի փաստացի հարստության և ներկայացված եկամուտների միջև չհիմնավորված անհամաչափությունը: Ենթադրվում է, որ «Կոլումբիան ունի նորմատիվ-իրավական բազա, որն ավելի բարձր մակարդակի ստանդարտներ ունի այս ոլորտում և, հավանաբար, տարածաշրջանում ամենաառաջադեմներից մեկն է՝ առանց մեղադրական դատավճռի բռնագրավման պրակտիկայի առումով»: ³⁸ Օրինակ, անշարժ գույք ձեռք բերելու ժամանակ առաջարկվում է ստուգել գույքի սեփականության շրթան առնվազն 20 տարվա

կտրվածքով՝ մինչև ներկայիս սեփականատիրոջ տնօրինմանն անցնելը՝ պարզելու համար օրինական սեփականության պատմությունը:³⁹

Կոլումբիայի սահմանադրական դատարանը հատկապես մարդու իրավունքների պաշտպանների կողմից քննադատության ենթարկվելուց հետո որոշում կայացրեց Գլխավոր դատախազության հատուկ լիազորությունների վերաբերյալ հաստատելով, որ *extinción de dominio*-ի իրավական դաշտը քրեական արդարադատության համակարգից ամբողջովին անկախ է: 2014-ին *extinción de dominio*-ն փոփոխվել է (օրենք 1708)⁴⁰ ավելի պարզեցնելու համար ընթացակարգը՝ կրճատելով դրա տևողությունը (որը նախկինում տևում էր միջինը հինգ տարի)⁴¹ և ուժեղացնելով երրորդ կողմ հանդիսացող անմեղ շահառուների (որոնք, օրինակ, կարող էին անտեղյակ լինել խնդրո առարկա ակտիվների ապօրինի ծագման մասին) իրավունքների պաշտպանությունը: *Extinción de dominio*-ն շարունակում է գործել ինքնուրույն և անկախ ցանկացած այլ քաղաքացիական, քրեական կամ վարչական կարգով ընթացակարգերից: Այն իր բնույթով *in rem* վարույթ է և թույլ է տալիս առգրավել, ի թիվս այլոց, հանցագործության գործիքները և օրինական ճանապարհով ձեռք բերված համարժեք ակտիվները (եթե ապօրինի ձեռք բերված ակտիվները հնարավոր չէ գտնել): Կոլումբիայում ներդրված այս մեխանիզմը նաև թույլ է տվել ներգրավել մասնագիտական պատրաստություն անցած նոր կադրերի՝ դատախազների, դատավորների և ստեղծել նոր դատարաններ՝ ավելի արդյունավետ դարձնելով համակարգի աշխատանքը:⁴²

Extinción de dominio-ի շրջանակներում վերադարձված ակտիվները փոխանցվում են Իրավունքների վերականգնման, սոցիալական իրավունքների ոտնահարման և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի հիմնադրամին (FRISCO) Sociedad de Activos Especiales (SAE) կազմակերպության միջոցով,⁴³ որը դրանք բաշխում է հետևյալ կերպ՝ 25% դատական իշխանությանը, 25% գլխավոր դատախազությանը և 50% ազգային կառավարությանը:⁴⁴ 2014-ից 2017 թվականներին FRISCO-ն կառավարել է առգրավված և բռնագրավված ակտիվները, որոնց արժեքը կազմում է ավելի քան 1,5 միլիարդ ԱՄՆ դոլար,⁴⁵ մինչդեռ SAE-ի կողմից առգրավված և մինչև 2022 թվականը պահվող ակտիվների արժեքը գնահատվել է ավելի քան 5,6 միլիարդ ԱՄՆ դոլար:⁴⁶

Այս համակարգը փաստացիորեն զրկել է բազմաթիվ հանցագործների իրենց ապօրինի ձեռք բերված ակտիվներից և միաժամանակ ֆինանսավորել է արդարադատության համակարգի աշխատանքը, ինչպես նաև հարյուրավոր սոցիալական և այլ ծրագրեր ամբողջ երկրում: Սա նաև այն հիմնական պատճառն է, թե ինչու է համակարգը ընդօրինակվել Լատինական Ամերիկայի երկրների մեծ մասում:

3.2. Վարչական կարգով բռնագանձում

Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների (ինչպես նաև նման հանցագործություններ կատարելու համար օգտագործվող գործիքների) բռնագանձումը կարող է իրականացվել մի շարք այլ իրավական մեխանիզմների, ինչպես նաև տարբեր գործակալությունների միջոցով (տե՛ս, օրինակ, վերոնշյալ քննարկումը Իռլանդիայի պետության համակարգված աշխատանքը հարկային և սոցիալական ապահովության մարմինների հետ): Ի տարբերություն քրեական կամ քաղաքացիական (*in rem*) կարգով բռնագրավման մեխանիզմների, որոնց համար սովորաբար պահանջվում է դատարանի որոշումը, վարչական կարգով բռնագանձումն ավելի հաճախ ոչ պատժիչ մեխանիզմ է, որն օգտագործվում է գույքի բռնագրավման նպատակով «հանցագործության կամ իրավախախտման համար, որը չի համապատասխանում քրեական հանցագործության պայմաններին»:⁴⁷

Վարչական կարգով բռնագանձումը բնութագրվում է հետևյալ կերպ՝ «...հետաքննության արդյունքում հանցավոր ճանապարհով ակտիվների ձեռքբերման գործի մեջ ներգրավված ակտիվների բռնագրավման ընթացակարգը: Առավել հաճախ կիրառվում է մաքսային վերահսկողության ոլորտում՝ սահմանին... կիրառվում է, երբ առգրավված ապրանքը համապատասխանում է վարչական կարգով բռնագրավման մոտեցմանը (առանց նախնական դատական վերանայման):»⁴⁸

Թեև վարչական կարգով բռնագանձումը հաճախ օգտագործվում է մաքսային մարմինների կողմից, այն կարող է կիրառվել այլ վարչական ընթացակարգերում, օրինակ՝ հարկային կամ եկամուտների հարցերով զբաղվող մարմինների կողմից: Այս մեխանիզմը ուղղված է ռեսուրսների արդյունավետ օգտագործման խթանման վրա՝ նպաստելով վեճերի արագ լուծմանը, անմիջականորեն նվազեցնելով երկրի դատական համակարգի վրա ավելորդ բեռը: Վարչական կարգով բռնագրավման ենթակա ակտիվները կառավարվում են անմիջականորեն առգրավող գործակալության կողմից՝ սովորաբար առանց դատական գործի հարուցման և առանց քրեական մեղադրանքի ներկայացման:⁴⁹ Վարչական կարգով բռնագրավման ենթակա ապրանքների ցանկը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով՝ անձնական սեփականություն (ապրանքներ, ուղեբեռ, ոսկերչական իրեր, արվեստի գործեր, կահույք, մշակութային հնություններ) և չհայտարարագրված կանխիկ գումար, որի արժեքը գերազանցում է ազգային օրենսդրությամբ սահմանված փոխադրման թույլատրելի արժեքը:⁵⁰

Վարչական կարգով բռնագանձում – Կիրառումը Միացյալ Նահանգներում

2014-ից 2018 թվականներին ԱՄՆ-ի Ներքին անվտանգության վարչությունը (DHS) առգրավել է մոտ 1,8 միլիարդ ԱՄՆ դոլարի կանխիկ գումար, էլեկտրոնիկա և տրանսպորտային միջոցներ ԱՄՆ-ում:⁵¹ Վարչական կարգով բռնագանձումը նույնպես մեծապես աջակցվում է ԱՄՆ Ներգաղթի և մաքսային վերահսկողության ծառայության (ICE), Մաքսային և սահմանային պաշտպանության գործակալության (CBP) և Միացյալ Նահանգների գաղտնի ծառայության (USSS) թմրամիջոցների թրաֆիքինգի և փողերի լվացման դեմ պայքարի աշխատանքային խմբերի կողմից: 2020 թվականի օգոստոսին ԱՄՆ մաքսային վերահսկողության մարմինները, համագործակցելով այլ դաշնային և տեղական իրավապահ մարմինների հետ, առգրավել են 27 միլիոն ԱՄՆ դոլարի չհայտարարագրված արժույթ, որ տեղափոխվում էր Վիրջինյան կղզիներ:⁵² CBP-ին հաջողվել է առգրավել արժույթը՝ խոշոր չափերի կանխիկ գումարի մաքսանենգության և «գումարը չհայտարարագրելու» մասին օրենքներով: Հաշվի առնելով, որ ակտիվները գերազանցել են 10,000 ԱՄՆ դոլարի շեմը, որի համար պահանջվում է հայտարարագրում՝ այլ երկիր մուտք գործելու կամ երկրից դուրս գալու ժամանակ, օրենքով համարվում է, որ դրանք կապված են հանցավոր գործունեության հետ:⁵³

Քննադատություններ

Միացյալ Նահանգներում առգրավված ակտիվներից ստացված հասույթը (օրինակ՝ վարչական կարգով բռնագրավման միջոցով առգրավված խոշոր դրամական միջոցները) փոխանցվում են Ակտիվների բռնագանձման հիմնադրամին, որն օգտագործվում է բազմաթիվ դաշնային իրավապահ գործակալությունների հաստուկ ծրագրերի և աշխատանքային խմբերի ֆինանսավորման համար: Այնուամենայնիվ, վարչական կարգով բռնագանձման կիրառումը վիճաբանությունների առիթ է տվել, քանի որ հետաքննությունների և աուդիտների արդյունքում բացահայտվել են անհամապատասխանություններ:⁵⁴ 2020թ.-ի վերջին աուդիտի շրջանակներում վերանայվել են DHS-ի կողմից 2014-ից մինչև 2018 թվականները կատարված բոլոր վարչական կարգով բռնագրավման դեպքերը և հայտնաբերել են բռնագանձումն իրականացնող մարմինների կողմից թույլ տված անհամապատասխանություններ և հնարավոր չարաշահումների դեպքեր:⁵⁵

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ կան բազմաթիվ ընթացակարգային պահանջներ, որոնք ուղղված են անհատներին չարաշահումներից պաշտպանելուն՝ միաժամանակ թույլ չտալով ծանրաբեռնել դատարաններին դատական գործողություններով, երբ ոչ ոք չի ներկայացնում սեփականության նկատմամբ իր օրինական իրավունքը: Այս պաշտպանության համար հիմք է հանդիսանում այն ենթադրությունը, որ վարչական կարգով բռնագանձումը հիմնված է բավարար հիմքերի առկայությունը վրա (ինչը պետք է ինչպես հարկն է հիմնավորված լինի) և պետք է ներառի, օրինակ, խիստ ժամկետներ և ծանուցումներ, որոնք նախատեսված են գույքի սեփականատերերի շահերը և իրավունքները պաշտպանելու համար:⁵⁶

Հետագա չարաշահումներից պաշտպանվելու նպատակով DHS-ը մշակել է ամբողջ գերատեսչության քաղաքականությունը և ընթացակարգերը, որոնք ներառում են Քաղաքացիական ակտիվների բռնագրավման բարեփոխումների ակտով (CAFRA) սահմանված հետևողական ծանուցումների և ձևերի օգտագործումը, որոնք պետք է գրվեն հասկանալի լեզվով, ինչպես նաև պարզաբանումներ տրամադրեն CAFRA-ի պահանջների համաձայն, և Հավակնություններից հրաժարման պայմանագրի օգտագործումը: Այս համաձայնագրով ենթադրվում է, որ գույքի սեփականատերը հրաժարվում է կառավարության դեմ հայց ներկայացնելու իրավունքից և չի մեղադրում կառավարությանը անօրինական գործողություններ կատարելու մեջ): Այս փաստաթղթի մշակման պահին DHS-ը դեռ չէր հրապարակել իր նոր քաղաքականությունը:

Իտալիայում մաֆիայի դեմ պայքարի օրենք⁵⁷

20-րդ դարի երկրորդ կեսից սկսած՝ Իտալիայում մաֆիայի հետ կապված հանցագործությունները լուրջ խնդիր էին տեղական իրավապահ մարմինների և հասարակական կարգի պահպանման համար: Մաֆիայի աճող ազդեցությունը նվազեցնելու և դրա հետ կապված հանցավոր գործունեության դեմ պայքարելու համար Իտալիայի քաղաքական գործիչները մշակեցին մաֆիայի դեմ պայքարի բարդ և կոտ իրավական համակարգ: Այս համակարգում ներառված են բռնագրավման մեխանիզմների հետ կապված մի քանի կանխարգելիչ միջոցառումներ, ինչպես նաև

մաֆիայի դեմ պայքարի գործողությունների շրջանակներում առգրավված կամ բռնագրավված ակտիվների տնօրինման, կառավարման և հանրային բաշխման վերաբերյալ հրահանգներ:

Քրեական պատիժ չնախատեսող առգրավումների մասին որոշումներ կարող են կայացվել, երբ խնդրո առարկա ակտիվները հասանելի են կասկածյալին անմիջականորեն կամ ոչ անմիջականորեն, և երբ կասկածյալի ունեցվածքի արժեքը գերազանցում է նրա օրինական եկամուտը և հարկային հայտարարագրերում ներկայացվածը: Հարկ է նշել, որ ֆիզիկական անձինք պահպանում են այդ ակտիվների օրինականությունն ապացուցելու իրավունքը:⁵⁸

Բացի այդ, մաֆիայի դեմ պայքարի օրենքով թույլատրվում է նախքան պաշտոնական լուսմները՝ կանխարգելիչ բռնագանձում կատարել հրատապ դեպքերում, երբ վտանգ կա, որ ակտիվները կարող են ցրվել կամ կորել:⁵⁹ Իրավասու դատական մարմինը հինգ օր ժամանակ ունի՝ համապատասխան իրավապահ մարմինների կողմից ներկայացված նման հայցերի վերաբերյալ որոշում կայացնելու համար: Հայցերը վերաբերում են հետևյալ դեպքերին. 1) կանխարգելիչ բռնագրավման վարույթում գտնվող գույքի սեփականատերը չի ապացուցում դրա օրինական ծագումը 2) ֆիզիկական անձի հայտարարագրված եկամուտը չի համապատասխանում նրա փաստացի տնտեսական գործունեությանը և (3) առկա են ապացույցներ, որոնք ցույց են տալիս ակտիվների անօրինական ծագումը: Մաֆիայի դեմ պայքարի օրենքով նախատեսված կանխարգելիչ բռնագրավման միջոցառումները կարող են իրականացվել անկախ քրեական հետաքննությունից և ընթացակարգերից՝ առաջնահերթությունը տալով ավելի արագ գործընթացին: Սրա հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ առգրավումն ու բռնագանձումը կազմակերպված հանցավորության դեմ պայքարում կարևոր գործիքներ են և պետք է կիրառվեն՝ հիմնվելով այն պայմանների վրա, որոնք կախված չեն քրեական դատարանի դատավճռից և հանցավոր գործունեության և կոնկրետ ակտիվների միջև անմիջական կապից: ⁶⁰ Այս միջոցները չեն պահանջում հանցավոր գործունեության համար պատասխանատվության ապացույցներ, այլ պահանջում են կասկածյալի գործունեության արդյունքում սոցիալական վտանգի ընդհանուր գնահատում՝ նշելով ապօրինի գործունեության շարունակման հավանականությունը: ⁶¹ Նման մեխանիզմները տարածվում են մաֆիայի հետ կապված հանցագործությունների շրջանակներից դուրս՝ ներառելով այլ լուրջ հանցագործություններ, ինչպիսիք են

փողերի լվացումը և կոռուպցիան: Հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ խնդրո առարկա ակտիվները ձեռք են բերվել անօրինական ճանապարհով, ինչը վկայում է կասկածյալի օրինական հայտարարագրված եկամտի և նրա փաստացի ունեցվածքի միջև զգալի տարբերությունը:⁶²

Գնահատվում է, որ 2012 թվականին կանխարգելիչ բռնագրավման միջոցներով առգրավվել է 1,2 միլիարդ եվրո:⁶³ 2020 թվականի օգոստոսից մինչև 2021 թվականի հուլիսն ընկած ժամանակահատվածում Իտալիայի հանցավոր կազմակերպություններից առգրավվել են ապօրինի կերպով ձեռք բերված 1,9 միլիարդ եվրո արժողությամբ ակտիվներ:⁶⁴ Միայն 2022 թվականի օգոստոսին իտալական իրավապահ մարմինները կարգադրել են բռնագրավել ավելի քան 160 միլիոն եվրո (ներառյալ ավելի քան 300 անշարժ գույք) արժողությամբ ակտիվներ՝ կազմակերպված հանցագործության հետ առնչություն ունեցող գործարարի հետաքննության արդյունքում:⁶⁵

3.3. Անհայտ ծագման գույքի նկատմամբ կալանքի մասին որոշումներ (UWOs) և Անհայտ ծագման ակտիվների բացահայտում (RUAs)

Ավելի քան երկու տասնամյակ ռուսաստանցի շատ օլիգարխներ և այլ անանուն միլիոնատերեր իրենց ապօրինի ֆինանսական ակտիվները ներդրել են օտարերկրյա իրավասություններում՝ գնելով միլիոնավոր դոլարների տներ, սպորտային թիմեր, լրատվամիջոցներ և այլ ապրանքներ օտարերկրյա իրավասության տարածքում:⁶⁶ Սա այն պատճառներից մեկն է, թե ինչու են երկրները ստեղծել նորարարական մեխանիզմներ՝ հանցագործներին իրենց ապօրինի ձեռք բերված եկամուտներից զրկելու համար: Օրինակ՝ Միացյալ Թագավորությունը ստեղծել է «Անհայտ ծագման գույքի նկատմամբ կալանքի մասին որոշումներ» (UWO) կայացնելու մեխանիզմ:

Քրեական ճանապարհով ձեռք բերված ֆինանսների մասին ակտով 2017թ.-ին ներդրված Անհայտ ծագման գույքի նկատմամբ կալանքի մասին որոշումներ կայացնելու մեխանիզմը կարող է կիրառվել իրավապահ մարմինների կողմից, երբ անձի փաստացի հարստությունը զգալիորեն գերազանցում է նրա ներկայացրած ունեցվածքը:⁶⁷ Եթե մեղադրյալ անձը «ողջամիտ արդարացում» չի ներկայացնում, դատարանը կարող է որոշում կայացնել խնդրո առարկա գույքի բռնագրավման մասին:⁶⁸

Մեծ Բրիտանիայի Տնտեսական հանցագործությունների մասին նոր ակտով (ECA) իրականացված բարեփոխումները նաև թույլ են տալիս Անհայտ ծագման գույքի նկատմամբ կալանքի մասին որոշումներ կայացնել հավատարմագրային կառավարման ներքո գտնվող և սեփականության այլ բարդ կառուցվածք ունեցող գույքի նկատմամբ:⁶⁹ Հաշվի առնելով, որ փողերի լվացման հետաքննությամբ զբաղվող (և ֆինանսական հետաքննությունների փորձի պակաս ունեցող) մարմինների հնարավորությունները սահմանափակ են՝ պատասխանատվության ենթարկելու համար հավատարմագրային, ֆիկտիվ ընկերություններին և կապակցված կազմակերպություններին, որոնց հետևում թաքնվում են հանցագործները, Անհայտ ծագման գույքի նկատմամբ կալանքի մասին որոշումներ թույլատրող մեխանիզմը որոշ չափով հաղթահարում է այս խոչընդոտները, այնուամենայնիվ ցանկացած անհայտ ծագման ունեցվածքի բացահայտման առաջնային բեռը դրվում է պետության վրա:

Մեծ Բրիտանիայում անհայտ ծագման գույքի նկատմամբ կալանքի մասին որոշումների նորարարական մեխանիզմը. առաջին որոշումը կայացված է

2018 թվականի փետրվարին Գերագույն դատարանը կայացրեց Անհայտ ծագման գույքի նկատմամբ կալանքի մասին իր առաջին որոշումը՝ մեկ ամիս էլ չանցած այն բանից, երբ Հանցագործության դեմ պայքարի ազգային գործակալությունը (NCA) պաշտոնապես լիազորվեց դիմել նման որոշում կայացնելու համար: Գործը վերաբերում էր Լոնդոնում գտնվող գույքին, որը ձեռք էր բերվել Բրիտանական Վիրջինյան կղզիներում գործող ընկերության կողմից: Վերջինիս սեփականատերը Ադրբեջանի Միջազգային բանկի նախկին նախագահ Ջահանգիր Հաջինն էր, ով ձերբակալվել էր և մեղադրվել Ադրբեջանում տարբեր ծանր հանցագործություններ կատարելու մեջ:⁷⁰

Գերագույն դատարանը բավարարեց Հանցագործության դեմ պայքարի ազգային գործակալության (NCA) կողմից ներկայացված Անհայտ ծագման գույքի նկատմամբ կալանքի վերաբերյալ երկու հայցերն ընդդեմ Հաջինի կնոջ, ով, ի թիվս այլոց, տիրապետում էր Լոնդոնում գտնվող գույքին, որի ընդհանուր գնահատված արժեքը կազմում էր ավելի քան 22 միլիոն ֆունտ ստեռլինգ:

Բողոքարկում – Նախադեպի ստեղծում

Անհայտ ծագման գույքի նկատմամբ կալանքի մասին որոշման կայացումից հետո Հաջինի կինը բողոք էր ներկայացրել Գերագույն դատարան հինգ հիմքով, այդ թվում՝

ներկայացնելով այն փաստարկը, որ Հաջիևի դատավճիռն անհիմն է՝ Ադրբեջանում նրա դատավարության հնարավոր թերությունների պատճառով, և որ նա չի կարող համարվել ազդեցիկ քաղաքական գործիչ (PEP):⁷¹

Անգլիայի վերաքննիչ դատարանը ուժի մեջ է թողել Մեծ Բրիտանիայի առաջին ՍՄՕ-ն (Անհայտ ծագման գույքի նկատմամբ կալանքի մասին որոշումը)՝ ստեղծելով ուժեղ նախադեպ, մինչ գործի վարույթը շարունակվում էր: Որոշումը կարևոր է համարվել ՍՄՕ-ի հայեցակարգի համար՝ ցույց տալով դրա ներուժը որպես ֆինանսական հետաքննության հզոր գործիք: Դատավճռից հետո ամբաստանյալն այլևս չէր կարող բողոքարկել որոշումը և պետք է ենթարկվեր դրան՝ NCA-ին ներկայացնելով այն գույքի հետ կապված ֆինանսական հաշվետվություններ և տեղեկություններ, որի համար կայացվել էր ՍՄՕ-ն:⁷²

Ե՞րբ կարելի է ՍՄՕ (Անհայտ ծագման գույքի նկատմամբ կալանքի մասին որոշում) կայացնել Մեծ Բրիտանիայում

1. Երբ ողջամիտ պատճառ կա ենթադրելու, որ ա. Պատասխանող կողմը տիրապետում է խնդրո առարկա ակտիվներին, բ. Ակտիվների արժեքը գերազանցում է 50 000 ֆունտ ստեռլինգը,
և
2. Երբ հիմնավոր հիմքեր կան կասկածելու, որ ա. Պատասխանող կողմի օրինական եկամուտը բավարար չէր լինի ակտիվներ ձեռք բերելու համար, կամ բ. Ակտիվները ձեռք են բերվել անօրինական եղանակով,
և
3. Պատասխանող կողմը ազդեցիկ քաղաքական գործիչ է, կամ կան հիմնավոր հիմքեր կասկածելու, որ պատասխանող կողմը կամ նրա հետ կապ ունեցող անձը ներգրավված է կամ ներգրավված է եղել լուրջ հանցագործության մեջ (Մեծ Բրիտանիայում կամ այլ վայրում):

Կարևոր է նշել, որ ՍՄՕ-ի մեխանիզմն ապահովում է պատշաճ ընթացակարգ՝ պատասխանող կողմին տալով խելամիտ ժամկետ՝ պատասխանելու հարցերին և հակադարձելու անօրինական եղանակով ձեռք բերված ակտիվների հետ կապված հայցերին՝ ներկայացնելով համապատասխան հաշվետվություններ և փաստաթղթեր: Առանց ողջամիտ պատճառաբանության այս պահանջների չկատարումը ենթադրում է, որ գույքը կարող է վերադարձվել:⁷³ Ընթացակարգում ներառված են լրացուցիչ

գործընթացներ, որոնք թույլ են տալիս պատասխանող կողմին վիճարկել UWO-ն, օրինակ՝ նոր ապացույցներ ներկայացնելու հնարավորություն տալով՝ ապացուցելու համար, որ ակտիվները ձեռք են բերվել օրինական ճանապարհով:

Միացյալ Թագավորությունում UWO-ի մեխանիզմի նման Ուկրաինյան ստեղծել է Անհայտ ծագման ակտիվների բացահայտման մեխանիզմ (RUAs)՝ ուղղված պետական պաշտոնյաների կամ նրանց հետ կապված անձանց անհայտ ծագման ունեցվածքի բացահայտմանը: Այս մեխանիզմները, որոնք նախատեսված են համապատասխան ընթացակարգերը պաշտպանելու և ապացուցման բեռի սխալ բաշխումը կանխելու համար, գնալով ավելի տարածված են դառնում և ծառայում են որպես արժեքավոր գործիքներ՝ անհայտ ծագման ունեցվածքը բացահայտելու համար:

Ուկրաինա

Ուկրաինայում Անհայտ ծագման ակտիվների բացահայտման մեխանիզմն օգտագործվում է անհայտ ծագման ունեցվածքի բացահայտման համար ինչպես ոչ քրեական վարույթներում, այնպես էլ քրեական գործերում, որտեղ հնարավոր չէ մեղադրական վճիռ կայացնել: Այն կիրառվում է, երբ անձի կարողությունը զգալիորեն գերազանցում է նրա օրինական և հայտարարագրված եկամուտը: Անհայտ ծագման ակտիվների բացահայտման (RUA) մեխանիզմի կիրարկման արդյունքում կատարվում է խնդրո առարկա անհայտ ծագման ունեցվածքի բռնագանձում և վերադարձ, այդ թվում, եթե անհրաժեշտ է, նույն արժեքին համապատասխան գույքի բռնագանձում:⁷⁴

Գործում է հավանականությունների հավասարակշռման ապացուցողական չափանիշը (օրինակ՝ պետությունը նախ պետք է ապացուցի, որ ավելի հավանական է, որ խնդրո առարկա ակտիվներն ակնհայտորեն գերազանցում են հայտարարագրված եկամուտը): Անհայտ ծագման ակտիվների բացահայտման մեխանիզմի թիրախը պետք է լինեն պետական պաշտոնյաները և պետական պաշտոնյայի հետ⁷⁵ անմիջական կամ ոչ անմիջական կապ ունեցող անձինք, թեև տրամաբանական կլինի Անհայտ ծագման ակտիվների բացահայտման մեխանիզմը կիրառել նաև պետական պաշտոնյաների հետ կապ չունեցող անձանց նկատմամբ. շարքային քաղաքացիները նույնպես կարող են ունենալ անհայտ ծագման ունեցվածք:

Հաղորդվում է, որ օրենքի սահմանումից հետո (և օրենքի հետադարձ ուժ չունենալով) Անհայտ ծագման ակտիվների բացահայտման մեխանիզմը կիրառվել է վեց գործերում,

որոնցից երեքի համար դատավճիռ է կայացվել Ուկրաինայի Բարձրագույն հակակոռուպցիոն դատարանի կողմից:

Առաջին դեպքում պետությունը են փոխանցվել մոտ 2,3 մլն գրիվեն և ավելի քան 35,000 ԱՄՆ դոլարի ակտիվներ: Երկրորդ դեպքում պետությունը են փոխանցվել մոտ 2,37 մլն գրիվեն արժողությամբ անշարժ գույք և հողային սեփականություն: Իսկ երրորդ դեպքում պետությունը են փոխանցվել մեկ միլիոն գրիվենից ավելի արժողությամբ ակտիվներ:

Անհայտ ծագման ակտիվների բացահայտման ընթացակարգի հիմնական առանձնահատկությունները՝

- Այն կարող է կիրառվել, երբ ակտիվները գնահատվում են մեկ միլիոն գրիվենից ավելի,⁷⁶ և
- Այն կարող է կիրառվել ինչպես *in rem* (գույքի դեմ), այնպես էլ *in personam* (անձի դեմ) վարույթներում: *In personam* պետական պաշտոնատար անձանց համար, իսկ *in rem* ակտիվների համար (գործի մասին ծանուցելով հայտնի սեփականատերերին):

Թե՛ Անհայտ ծագման գույքի նկատմամբ կալանքի վերաբերյալ որոշման կայացման, և թե՛ Անհայտ ծագման ակտիվների բացահայտման վարույթը սովորաբար ավելի արագ է ընթանում, քան քրեական վարույթը (առնվազն ակտիվների վերաբերյալ վերջնական որոշման առումով) և գործնականում հաջողվում է խլել ապօրինի ձեռք բերված (կամ չհայտարարագրված) ակտիվներն այն անձանցից, ովքեր, ենթադրվում է՝ ներգրավված են ապօրինի գործունեության մեջ (կամ օգուտներ են քաղում դրանից): Այս մեխանիզմի մյուս առավելությունն այն է, որ պետությունն ավելի վստահելի է դառնում՝ հիասթափված հանրությանը ցույց տալով, որ հանցագործությունից օգուտ չեն ստանում:

Այնուամենայնիվ, չնայած Անգլիայում UWO-ի համար սահմանված դրույթներին, 2018 թվականի հունվարից դրա կիրառումը մնում է սահմանափակ: Այս ուսումնասիրության մշակման պահին չորս դեպքի հետ կապված միայն ինը Անհայտ ծագման գույքի նկատմամբ կալանքի վերաբերյալ որոշում է (UWO) կայացվել 2018 թվականի հունվարից մինչև 2022 թվականի փետրվարը:⁷⁷ Ամփոփելով 2020 թվականը՝ պարզվել է, որ 2017 թվականից ի վեր փողերի լվացման դեպքերն ըստ էության աճել են, ինչը ցույց է տալիս, որ UWO-ները դեռևս էական ազդեցություն չեն ունեցել ապօրինի գործունեությունը կանխելու համար, ի տարբերություն իռլանդական քաղաքացիական կարգով բռնագրավման մոդելի, որն ավելի մեծ արդյունավետություն է ցուցաբերել ֆինանսական հանցագործությունների դեմ պայքարում:⁷⁸

Քննադատները նաև ընդգծել են, որ UWO-ի մեխանիզմը դեռևս չի կիրառվել բարդ գործերի համար, երբ ամբաստանյալը հանդիսանում է օտարերկրյա կառավարության մաս կամ ամուր կապեր ունի դրա հետ, օրինակ՝ միայն Լոնդոնում հազարավոր մի քանի միլիոն դոլար արժողությամբ անշարժ գույքերի հետ կապված գործեր կան:⁷⁹ Թեև Մեծ Բրիտանիան արժանի է գովասանքի UWO-ի մեխանիզմի ներդրման համար (և շատ իրավական համակարգեր պետք է մտածեն այս մեխանիզմի ընդօրինակման ուղղությամբ), այսպիսի դրույթների նպատակաուղղված իրականացումը մնում է առաջնային խնդիր:⁸⁰

Նման մեխանիզմների կիրառումը չպետք է սահմանափակվի միայն պետական պաշտոնյաների անհայտ ծագման գույքի բացահայտմամբ: Բնականաբար, ոչ պետական պաշտոնյաները նույնպես կարող են եկամուտներ ստանալ անօրինական ճանապարհով: Բացի այդ, եթե նպատակը պարզապես անհայտ ծագման ունեցվածքի (ակտիվների) վերադարձն է, որտեղ դատարանը իրավունք չունի գրկել անձին ազատությունից կամ հանցագործության մեջ մեղադրել նրան, որևէ հիմնավորում չկա, թե ինչու պետք է նման մեխանիզմները որևէ կերպ կապված լինեն քրեական վարույթի հետ: Այդուհանդերձ, պետական դատախազները և, ավելի հաճախ, դատավորները հաճախ դժվարանում են հասկանալ նման մեխանիզմները: Շատ դատավորներ պարզապես սովորել են, որ առգրավումները և բռնագանձումները քրեական արդարադատության ոլորտի տիրույթում են, թեև այլ ոչ քրեական գործով առգրավումներ և բռնագանձումներ պարբերաբար տեղի են ունենում քրեական արդարադատության ոլորտից դուրս (օրինակ՝ մաքսային և հարկային վարույթներում):

3.4. Հարկային վարույթներ

Շատ դեպքերում հանցավոր գործունեության ոչ թափանցիկ և մոլորության մեջ զգող բնույթի պատճառով դատախազները կարող են չկարողանալ հստակ կապ հաստատել կասկածյալի և հնարավոր հանցագործությունների միջև, ինչը դժվարացնում է քրեական հետապնդումը կամ քաղաքացիական կարգով բռնագրավման և անհայտ ծագման ունեցվածքի բացահայտման մեխանիզմների հասանելիությունը:

Անկախ նրանից, թե արդյոք հնարավոր է հետաքննել եկամուտ բերող հանցագործությունը, թե ոչ, քննիչները միշտ պետք է պատրաստ լինեն փոխանցել գործի առանձին բաղադրիչները հարկային մարմիններին և համագործակցել այդ մարմինների հետ: Ապօրինի կերպով ձեռք բերված ակտիվների վերադարձման գործում ամենից շատ հաջողել են այն իրավական համակարգերը, որտեղ ոստիկանությունը և/կամ դատախազները համագործակցել են հարկային մարմինների

հետ (օրինակ՝ որոշ իրավական համակարգերում ապօրինի ձեռք բերված և հաճախ չհայտարարագրված կամ թերհայտարարագրված ակտիվների ավելի քան 90%-ը վերադարձվել են հարկային մարմնին դիմելու միջոցով):

Ֆրանսիայում հարկային օրենքների արդյունավետ կիրառումը ակտիվների բռնագրավման գործում

2012 թվականին Ֆրանսիայի նախկին նախագահ Օլանդի կողմից նշանակվելով բյուջեի հարցերով նախարար՝ Ժերոմ Կայուզակին հանձնարարվել էր պայքարել մեծ կարողության տեր անձանց կողմից հարկերից խուսափելու դեմ Ֆրանսիայում: Սակայն իր նշանակումից շատ չանցած Կայուզակը ստիպված եղավ հրաժարական տալ 2013 թվականին այն բանից հետո, երբ հետաքննական լրատվական կայքէջում տեղեկություններ հայտնվեցին այն մասին, որ նախարարը Շվեյցարիայում և Մինգապուրում գաղտնի օֆշորային բանկային հաշիվներ էր բացել, որտեղ պահում էր ավելի քան 3,5 միլիոն եվրո:⁸¹

Հետագայում Կայուզակը դատապարտվեց հարկային խարդախության և փողերի լվացման համար և պարտավորվեց վճարել մոտ 2,3 միլիոն եվրո չվճարված հարկեր, մինչդեռ նրա նախկին կինը դատապարտվեց երկու տարվա ազատազրկման այս մեքենայության մեջ մասնակցելու համար:⁸² Այս օրինակը ոչ միայն ցույց է տալիս, թե ինչպես երկրների (այս դեպքում՝ Ֆրանսիայի, Շվեյցարիայի և Մինգապուրի) միջև համագործակցությունը կարող է օգնել հանցագործների հետաքննությանը, այլ նաև թե ինչպես կարելի է հարկային օրենքների կիրառմամբ վերադարձնել ապօրինի ձեռք բերված ակտիվները: Այս օրինակը ցույց է տալիս, թե ինչպես հարկային մարմինները կարող են աջակցել իրավապահ մարմիններին ընթացիկ հետաքննություններում, և ինչպես հարկային օրենքները կարող են կիրառվել կոռուպցիայի, կաշառակերության բացահայտման և գողացված ակտիվների վերադարձման գործերում:

Թեև շատ իրավական համակարգերում հարկերից խուսափելը համարվում է հանցագործություն և կարող է հետապնդվել քրեական կարգով, կարևոր է հասկանալ, որ հարկային մարմինները կարող են օգտագործել իրենց վարչական լիազորությունները՝ չհայտարարագրված ակտիվներն ավելի արագ բռնագրավելու համար՝ անկախ նրանից՝ դատախազները կարողացել են դատապարտել անձին՝ հարկերից խուսափելու համար, թե ոչ: Վառ օրինակ է Ալ Կապոնեի՝ Չիկագոյի տիրահոջակ գանգստերի գործը, ով կասկածվում էր սպանության, շորթման և անօրինական ապրանքների առևտրով զբաղվելու մեջ: Թեև դատարանում

դատախազները չկարողացան ապացուցել Ալ Կապոնեի մասնակցությունն այս հանցագործություններին (հաճախ վկաների բացակայության պատճառով), նա, այնուամենայնիվ, դատապարտվեց հարկերից խուսափելու համար:⁸³

Հարկային մարմինների լիազորությունների օգտագործումը և հարկերից խուսափելու կամ ֆինանսական տվյալների խեղաթյուրման այլ ձևերի համար քրեական գործեր հարուցելը (օրինակ՝ ընկերության հաշիվներում կամ ֆինանսական հաշվետվություններում գործարքների մանիպուլյացիա կատարելը՝ ակտիվները, եկամուտները կամ ծախսերը թերագնահատելու նպատակով՝ հարկվող եկամուտը կամ հանվող ծախսերը փոփոխելու համար) կարող է նպաստել ապօրինի ձեռք բերված գույքի առգրավման և բռնագրավման գործում:

Բացի այդ, հարկային մարմինները կարող են էապես օգնել քրեական գործերով զբաղվող քննիչներին՝ ֆինանսական ստուգումներ իրականացնելով կասկածելի հաշիվների և բանկային հաշվետվությունների համար: Ավստրալիան, Միացյալ Նահանգները և Իռլանդիան այն երկրների թվում են, որոնց իրավական համակարգերն ընդունել են նորարարական և օգտակար հարկային օրենքներ՝ կազմակերպված հանցավորության դեմ պայքարելու համար:⁸⁴ Բացի այն, որ դատախազները գործին առնչվող առանձին ֆինանսական բաղադրիչներ են փոխանցում հարկային մարմիններին, հարկային պաշտոնյաները պետք է իրավասու լինեն և խրախուսվեն հարկային ստուգումների ընթացքում ձեռք բերված տեղեկությունները իրավապահ մարմիններին փոխանցելու համար: Այս տեղեկատվությունը կարող է կարևոր լինել՝ կոռուպցիայի, կաշառակերության, յուրացման, փողերի լվացման և իհարկե հարկերից խուսափելու հետ կապված քրեական գործերի հետաքննման համար: Ֆինանսական գործերի քննիչները կարող են օգնություն խնդրել ոչ միայն հարկային մարմիններից՝ անհայտ ծագման ունեցվածքը հետաքննելու համար, այլ նաև այլ սուբյեկտներից, օրինակ՝ սոցիալական ապահովության աղմինիստրատորներից, որոնց տվյալների բազաներում պահվում են քաղաքացիների կողմից իրենց ունեցվածքի մասին ներկայացված հայտարարագրերը, տե՛ս ստորև:

3.5. Ակտիվների վերադարձի և սոցիալական ապահովության ծրագրեր

Ակտիվների վերադարձի վերջին հաջողված փորձը կապված է քննիչների/դատախազների և սոցիալական ապահովության տվյալների բազաներին հասանելիություն ունեցող պաշտոնյաների միջև միջգերատեսչական համագործակցությանը: Սա տրամաբանական է՝ հաշվի առնելով, որ փողերի լվացման կամ եկամտաբեր այլ հանցագործությունների մեջ կասկածվող անձինք կարող են ներգրավված լինել մեքենայությունների մեջ նաև սոցիալական ապահովության

ուրրտում: Այսպիսի կասկածյալները կարող են անօրինական կերպով պնդել, որ ցածր եկամուտներ ունեն` սոցիալական աջակցություն ստանալու համար:

Այս դեպքում քննիչները կարող են ավելի հեշտությամբ ցույց տալ դատարանին, որ անձի փաստացի ակտիվներն էականորեն գերազանցում են իր կողմից հայտարարագրված եկամուտը, ինչը կարող է հաստատվել սոցիալական ապահովության տվյալների բազայի արձանագրություններով: Սուբսիդավորվող սոցիալական ապահովության ծրագրերին հասանելիություն փնտրող անձինք պետք է հայտարարագրեն իրենց եկամուտը, որը հաճախ պետք է լինի որոշակի շեմից ցածր: Այս տեղեկատվությունը հատկապես օգտակար է «անհայտ ծագման ունեցվածքի» կամ «չհիմնավորված հարստացման», ինչպես նաև հարկերից խուսափելու դեպքերում: Սոցիալական ապահովության բազմաթիվ ծրագրեր ունեն անօրինական կերպով ստացված սոցիալական նպաստների վերադարձման իրենց մեխանիզմները, և այդ մեխանիզմները վարչական բնույթ ունեն և չեն պահանջում երկարատև քրեական վարույթ: Հետևաբար, ոստիկանությունը, դատախազները և այլ պաշտոնյաներ, ովքեր բազմաթիվ պատճառներով կարող են խոչընդոտների հանդիպել ակտիվների վերադարձի հետ կապված քրեական գործ հարուցելիս, կարող են կանոնավոր կերպով համակարգել իրենց գործողությունները սոցիալական ապահովության մարմինների հետ` հաճախ ավելի արագ վարչական գործընթացի միջոցով ակտիվներն ավելի արդյունավետ կերպով վերադարձնելու համար:

Այս դինամիկան ընդգծում է բազմաթիվ ինստիտուցիոնալ տվյալների բազաներին (օրինակ` բիզնեսի ռեգիստր, հողային ռեգիստր, տրանսպորտային միջոցների ռեգիստր, հարկային տվյալների բազա, սոցիալական ապահովության տվյալների բազա, դատվածությունների գրանցամատյան) հասանելիության կարևորությունը մեկ հարկի տակ: Սա թույլ է տալիս քննիչներին ամբողջական պատկերացում կազմել անձի, նրա գործընկերների և/կամ ընտանիքի անդամների ակտիվների մասին` հաշվի առնելով, որ նրանք, ովքեր զբաղվում են փողերի լվացմամբ, մեծ մասամբ դրանք չեն լվանում իրենց անունով: Իրականում ակտիվների միջգերատեսչական ուսումնասիրությունը հաճախ հանգեցնում է ուրիշների բացահայտմանը, ովքեր կարող են ներգրավված լինել հանցավոր գործունեության մեջ:

Իռլանդիայի Սոցիալական ապահովության բաժնի աշխատակիցներ (SWBOs)

Հանցավոր գործունեությամբ զբաղվող անձանց սոցիալական ապահովության նպաստների ստացման իրավունքը հետաքննելու և բացահայտելու նպատակով SWBO-ները 2022 թվականին բազմաթիվ հետաքննություններ են իրականացրել՝ բացահատելով ընդհանուր առմամբ ավելի քան հինգ միլիոն եվրոյի խախտումներ: Այս գումարից ավելի քան 700 000 եվրոն խնայվել է՝ անիրավունակ ճանաչված անձանց վճարումները դադարեցնելու հաշվին: Ավելի քան չորս միլիոն եվրո կազմել են գերավճարները, որոնք SWBO-ները կարողացել են վերականգնել:⁸⁵

Մի դեպքում SWBO-ները բացահայտեցին անհայտ ծագման հարստություն գործազրկության նպաստ ստացող անձի և նրա ընկերուհու բնակարանում, ով ստանում էր մեկ ծնող ունեցող ընտանիքի համար նպաստ: Նրանք հայտնաբերեցին 70 000 եվրո կանխիկ փող, թանկարժեք զարդեր (ներառյալ դիզայներական ժամացույցներ) և շքեղ Audi Q7, որի արժեքը գնման պահին կազմում էր մոտ 72 000 եվրո: Հետաքննության արդյունքում նաև հայտնաբերվեցին անձի անունով նախկինում չհայտարարագրված բանկային հաշիվներ, որոնցից մեկում 85 000 եվրոյի չափով անհայտ ծագման դեպոզիտներ կային: Սա բերեց նրան, որ գործազրկության նպաստը հետադարձ ուժով չեղարկվեց մինչև 2009 թվականը, ինչի արդյունքում հաշվարկվեց, որ կատարվել է 125 000 եվրոյի գերավճար: Նույնկերպ մեկ ծնող ունեցող ընտանիքի համար նպաստը նույնպես հետադարձ ուժով չեղարկվեց, ինչի արդյունքում գերավճարը վերականգնվեց 27 000 եվրոյի չափով:⁸⁶

3.6. Մինչդատական համաձայնագիր, հաշտեցում կամ այլ բանակցային կարգավորումներ

Ակտիվների վերադարձի համատեքստում մասնագետները քաջատեղյակ են, որ քրեական վարույթի հարուցումից մինչև գույքի բռնագրավման վերաբերյալ վերջնական որոշման կայացումը հաճախ տարիներ է տևում: Փողերի լվացման հետ կապված բարդ գործերը կարող են տևել առնվազն մի քանի տարի՝ պետությունից խլելով մեծ ծախսեր և մարդկային մեծ ռեսուրսներ (ինչպես նաև հարկ վճարողների գումարները):⁸⁷ Այսպիսի երկարատև վարույթները կարող են նաև հասարակության մոտ այն տպավորությունը ստեղծել, որ «արդարադատության հաստատումը» դանդաղ

և անարդյունավետ գործընթաց է: Մասնագետները նաև հաղորդում են, որ որքան երկար է գործընթացը, այնքան ավելի շատ ժամանակ և հնարավորություններ են ստեղծվում ամբաստանյալների համար (փողով կամ ազդեցությամբ) կաշառելու իրավապահ կամ դատական պաշտոնյաներին, հատկապես այն երկրներում, որտեղ կա կոռուպցիա և/կամ օրենքի թույլ գերակայություն:

Մինչդատական համաձայնագիրը կամ բանակցային կարգավորման հայեցակարգը լայնորեն կիրառվող մեխանիզմ է ակտիվների վերադարձի համատեքստում:

Մինչդատական համաձայնագիրը (շատ երկրներում հաճախ անվանում են «հաշտեցում») այն պրակտիկան է, որն օգտագործում են դատախազները՝ համաձայնության գալու համար մեղադրյալի հետ՝ ավելի մեղմ պատժաչափի դիմաց: Այս պրակտիկայի կիրառումը, որը հաճախ արդարացված է և պրակտիկ՝ հաշվի առնելով դատարանների և դատախազների ծանրաբեռնվածությունը, նպատակ ունի նվազեցնել պետության համար քրեական վարույթը շարունակելու բեռը և ծախսերը՝ միաժամանակ կարճելով ամբաստանյալի գործը և ավելի թեթև պատիժ սահմանելով նրա համար, որը որոշ դեպքերում կարող է լինել ոչ ավելի, քան նախնական կալանքի տակ գտնվելու ժամկետը (հնարավոր է նաև պայմանական պատիժ՝ պայմանով, որ ամբաստանյալը պետք է բավարարի որոշ չափանիշներ, օրինակ՝ ներկայացնի շահութաբեր աշխատանքի ապացույց՝ որոշակի ժամանակահատվածի համար):⁸⁸ Մինչդատական համաձայնագրի կիրառումը սովորաբար, թեև ոչ միշտ, նախատեսված է ոչ բռնի հանցագործություն կատարած օրինախախտների համար: Ակտիվների վերականգնման համատեքստում ամբաստանյալն ակտիվները պետությանը վերադարձնելու դիմաց (կամ այլոց կողմից ապօրինի կերպով ձեռք բերված ակտիվների վերաբերյալ դատախազներին վստահելի տեղեկություններ տրամադրելու համար) կարող է կամ ավելի մեղմ պատիժ ստանալ, կամ նրա մեղադրանքը կարող է ամբողջությամբ հանվել:

Մինչդատական համաձայնագրի պրակտիկան (ցավոք, այն դեռևս չի կիրառվում շատ իրավական համակարգերում) մեծ ժողովրդականություն է վայելում առնվազն 47 երկրներում, որոնք վավերացրել են դատավարություններից հրաժարվելու մեխանիզմը, որտեղ համաձայնություն է ձեռք բերվում ամբաստանյալի հետ:⁸⁹

Մասնագետների գնահատմամբ, Միացյալ Նահանգներում բոլոր դատավարությունների 90-ից 95%-ը իրականացվում են մինչդատական համաձայնագրերի միջոցով:⁹⁰ Այս պրակտիկան դատախազներին հնարավորություն է տալիս գործերի լուծման համար նվազագույնի հասցնել պետական ռեսուրսների օգտագործումը՝ միաժամանակ ապահովելով ամբաստանյալի հետ փոխադարձ ընդունելի լուծում: Ճիշտ կիրառման դեպքում մինչդատական համաձայնագրերը

կարող են օգտագործվել ոչ միայն դատաքննությունն արագացնելու, այլև ակտիվների վերադարձն արագացնելու համար:

Եգիպտոսում հաշտեցման համաձայնագրերի կիրառման հաջող փորձը⁹¹

Եգիպտոսին տրված տեխնիկական փորձագիտական խորհրդատվության շրջանակներում ՄԱԿ-ի Հանցավորության և արդարադատության հարցերի միջտարածաշրջանային գիտահետազոտական ինստիտուտը (UNICRI) Եգիպտոսի իշխանություններին խորհուրդ է տվել ուսումնասիրել հաշտության համաձայնագրի կիրառման պրակտիկան՝ նախկին բարձրաստիճան պաշտոնյաների կողմից յուրացված միջոցների մի մասը վերադարձնելու համար:

2016-ին հաշտության համաձայնագիր է ստորագրվել Եգիպտոսի Անօրինական հարստացման դեմ պայքարի մարմնի և Հուսեյն Սալեմի (նախագահի նախկին խորհրդական) միջև՝ փորձելով վերադարձնել 5,8 միլիարդ եգիպտական ֆունտ: Սալեմը համաձայնել է Եգիպտոսի իշխանություններին վերադարձնել իր ակտիվների 78%-ը, ներառյալ բազմաթիվ վիլլաները (առնվազն ութը) Շարմ-էլ-Շեյխի առողջարանային շրջանում, մի քանի ընկերությունների բաժնետոմսեր և կանխիկ գումար՝ քրեական հետապնդումից անձեռնմխելիության և Եգիպտոս վերադառնալու թույլտվության դիմաց:

Սալեմն իր բացակայությամբ (*in absentia*) դատապարտվել էր 25 տարվա ազատազրկման՝ տարբեր հանցագործությունների, այդ թվում՝ յուրացման համար: Սակայն, հաշտության համաձայնագրի շնորհիվ հետագա դատական հայցերը հետ կանչվեցին, Սալեմի մնացած ակտիվները ապաստանեցվեցին, և նրա անունը հանվեց Եգիպտոսի հետախուզման ցուցակից:

Թեև այս համաձայնագիրը համարվեց Եգիպտոսում այս բնույթի ամենամեծ գործարքը, քննադատություններ հայտնվեցին նման համաձայնագրերի երկարաժամկետ զսպման մեխանիզմի վերաբերյալ: Ի թիվս այլ կետերի, նշվում էր, որ հաշտեցման գործընթացում պետք է ավելի խիստ սահմանափակումներ մտցվեն: Յուրաքանչյուր դեպք տարբեր է, և այս դեպքում քննադատները պնդում էին, որ պետք է որոշ չափով ազատազրկում կիրառվեր: Այնուամենայնիվ, ակտիվների վերադարձի տեսանկյունից դժվար թե որևէ ակտիվ հնարավոր լիներ վերադարձնել՝ առանց Եգիպտոսի կողմից հաշտեցման պրակտիկայի կիրառման:

Հաշտեցման կամ մինչդատական համաձայնագրի կիրառման հետ կապված դիտողություններ, որոնք հիմնված են փաստացի գործերի վրա.

- Դատախազները պարտավոր են բացահայտել ամբաստանյալի օգտին ցանկացած ապացույց՝ անկախ նրանից՝ ամբաստանյալն այդ մասին խնդրել է, թե ոչ: Մա ապահովում է, որպեսզի ամբաստանյալները տեղեկացված լինեն ցանկացած արդարացնող ապացույցի մասին, որը կարող է ազդել հաշտության կամ մինչդատական համաձայնագրին ընդունելու իրենց որոշման վրա:
- Այս գործընթացը պետք է բացահայտ լինի, և պետք է ստեղծված լինեն մեխանիզմներ, որոնք հնարավորություն չեն տա դատախազներին կամ ոստիկաններին մինչդատական համաձայնագիր պարտադրել՝ մեղադրյալի վրա ֆիզիկական կամ հոգեբանական բռնություն գործադրելով և նրա կամքի վրա ազդելով: Առանց նման երաշխիքների՝ հաշտեցման կամ մինչդատական համաձայնագրի վստահելիությունը կարող է խաթարվել՝ հանգեցնելով մարդու իրավունքների հնարավոր խախտումների:
- Հարկադրանքի ռիսկից խուսափելու համար ամբաստանյալի փաստաբանը պետք է հնարավորություն ունենա մանրամասն ներկայացնելու նրան վերագրվող հանցագործությունները՝ նախքան ամբաստանյալը կորոշի իրեն մեղավոր ճանաչել կամ հաշտության համաձայնություն կնքել:
- Ակտիվների վերադարձի համար հաշտության համաձայնագրերի պրակտիկայի կիրառումը պետք է նպաստի հանցավոր գործունեության կանխմանը և գործերի արդյունավետ լուծմանը և՛ պետության, և՛ մեղադրյալի մասով: Այդուհանդերձ, արդյոք այս մոտեցումը կհաստատի արդարություն, թե ոչ, կախված կլինի տվյալ երկրից և կոնկրետ հանգամանքներից: Օրինակ, բարձր դիրք ունեցող մեղադրյալների համար (կոռուպցիոն գործունեության մեջ ներգրավված նախկին բարձրաստիճան նախարարների կամ քրեական հեղինակությունների), որոնք վերահսկում են բազմաթիվ հանցավոր գործողություններ, կարող են սահմանափակել նման համաձայնագրերի կիրառումը, կամ նրանք չպետք է կարողանան ամբողջությամբ խուսափել ազատագրվումից այդ համաձայնագրերի միջոցով:

3.7. Ընդլայնված բռնագանձում

Մի շարք իրավական համակարգեր ներդրել են «ընդլայնված բռնագրավման» պրակտիկան՝ որպես անօրինական ճանապարհով ձեռք բերված ակտիվների վերադարձի արժեքավոր գործիք: Շատ իրավական համակարգերում «ընդլայնված բռնագանձում» նշանակում է, որ եթե մեղադրյալը դատապարտվում է եկամտաբեր կոնկրետ լուրջ հանցագործության համար, ապա Դատարանը կարող է որոշում կայացնել՝ նշելով, որ ամբաստանյալի կողմից ձեռք բերված բոլոր ակտիվները, ասենք,

վերջին հինգից տասը տարիների ընթացքում,⁹² «ենթադրաբար» ձեռք են բերվել ապօրինի ճանապարհով, եթե ամբաստանյալը չի կարող հակառակն ապացուցել: Ընդլայնված բռնագանձումն առանձնանում է նրանով, որ ակտիվները, որոնք այժմ ենթադրվում է, որ ձեռք են բերվել ապօրինի ճանապարհով, չպետք է կապված լինեն որևէ կոնկրետ հանցագործության հետ, և ելնելով սկզբնական հանցագործության լրջությունից, որի համար մեղադրյալը դատապարտվել է, այժմ նրա ակտիվների օրինական ծագման (առնվազն վերջին ժամանակաշրջանում ձեռք բերված) ապացուցման բեռն ընկնում է ամբաստանյալի վրա:

Եվրոպական խորհրդարանը և խորհուրդն ընդունել են 2014/42/ԵՄ հրահանգի 5(1) հոդվածը՝ ընդլայնված բռնագրավման մասին, որով անդամ պետություններին հնարավորություն է տրվում բռնագրավել դատապարտյալին պատկանող գույքը, երբ. (i) հանցագործությունը կարող է տնտեսական օգուտ բերել, և (ii) գործի հանգամանքները ցույց են տալիս, որ գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով:⁹³

Նիդեռլանդներ – Ընդլայնված բռնագրավման պրակտիկայի հաջող կիրառում

2012-ի գարնանը SBM Offshore N.V.-ի՝ հոլանդական օֆշորային նավթային հորատման սարքավորումների արտադրությամբ զբաղվող ընկերության նկատմամբ ներքին հետաքննություն սկսվեց՝ մրցակցային առավելություններ ունենալու կամ պետական նավթային ընկերությունների հետ բիզնեսը պահպանելու դիմաց օտարերկրյա վաճառքի գործակալներին կատարված անօրինական վճարումների հետ կապված գործով:⁹⁴ Արդյունքում բացահայտվեց, որ SBM Offshore N.V.-ն 2007թ. -ից մինչև 2011 թվականը օտարերկրյա վաճառքի գործակալներին վճարել է մոտ 200 միլիոն ԱՄՆ դոլար միջնորդավճար՝ նրանց ծառայությունների համար:⁹⁵ Այդ վճարումների մեծ մասն ուղղվել է Հասարակածային Գվինեա, Անգոլա և Բրազիլիա՝ կաշառքի տեսքով:

Որպեսզի հանցագործությունը չդիտվի որպես օգուտ ստանալու միջոց, հոլանդական օրենսդրությունը սահմանեց բռնագրավման ընդլայնված ընթացակարգ: Այս ընթացակարգով դատավորը կարող է կայացնել առանձին վճիռ և մեղադրյալին պարտադրել հանցավոր արարքի կատարումից առաջ վեց տարվա ընթացքում ապօրինի ձեռք բերված ֆինանսական օգուտները վերադարձնել պետությանը:⁹⁶ Ընդլայնված բռնագրավման այս ձևի համաձայն՝ այս վեց տարվա ընթացքում ձեռք բերված ամբողջ ունեցվածքը և ակտիվները ենթակա են բռնագրավման, եթե չկան ապացույցներ, որ դրանք ձեռք են բերվել օրինական ճանապարհով. կարիք չկա ապացուցելու, որ դրանք ձեռք են բերվել անօրինական եղանակով:⁹⁷

SBM Offshore N.V.-ն ընդունել է Նիդեռլանդների դատախազության առաջարկը՝ կնքելով մինչդատական համաձայնագիր և համաձայնելով վճարել 240 միլիոն ԱՄՆ դոլար:⁹⁸ Գումարը կազմված էր 40 միլիոն ԱՄՆ դոլարի տուգանքից և 200 միլիոն ԱՄՆ դոլարի վճարումից՝ համաձայն Նիդեռլանդների Քրեական օրենսգրքի 36e հոդվածի: Դրանք ապօրինի կերպով ստացված այն օգուտներն էին, որոնք ընկերությունը ձեռք էր բերել տարիների ընթացքում:⁹⁹ Այս դեպքը ոչ միայն վերահաստատեց Նիդեռլանդների հանձնառությունը՝ պայքարելու արտաքին կոռուպցիոն պրակտիկայի դեմ, այլև դարձավ երկրի պատմության մեջ խոշորագույն ընդլայնված բռնագրավման գործերից մեկը:

Ինչպես բռնագրավման այլ մեխանիզմների դեպքում, ապացուցման բեռի բաշխումը կարող է տարբեր լինել տարբեր իրավական համակարգերում:¹⁰⁰ Օրինակ՝ Նիդեռլանդներում, Էստոնիայում և Կիպրոսում դատարանները կարող են «ենթադրել», որ այլ ակտիվներ նույնպես ձեռք են բերվել հանցավոր գործունեության արդյունքում այն բանից հետո, երբ մեղադրյալը դատապարտվի առանձնապես խոշոր եկամտաբեր հանցագործությունների համար: Ավստրիայում ընդլայնված բռնագանձումը թույլատրվում է միայն այն դեպքում, եթե այն հիմնված է «հիմնավոր ենթադրության վրա»:¹⁰¹ Բացի այդ, պետությունները կարող են ընդլայնված բռնագրավման համար տարբեր ժամանակահատվածներ կիրառել, օրինակ՝ Նիդեռլանդներում՝ հանցագործության կատարումից վեց տարի առաջ, Բելգիայում, Հունգարիայում, Պորտուգալիայում և Ռումինիայում՝ մեղադրական եզրակացությունից հինգ տարի առաջ, իսկ Բուլղարիայում՝ մեղադրական եզրակացությունից տասը տարի առաջ:¹⁰² Պետք է հաշվի առնել նաև մարդու իրավունքները: Պետությունները պետք է ձեռնպահ մնան առաջին անհրաժեշտության պարագաների, այդ թվում՝ բնակարանային առաջնային կարիքների, սննդի, առողջապահական խնամքի, երեխաների աջակցության և ալիմենտի հասանելիությունն ապահովող միջոցների առգրավումից կամ բռնագանձումից: Որոշ պետություններ լուծում են այս հարցը՝ օրենսդրության մեջ ներառելով դրույթ, որը թույլ է տալիս դատարանին զերծ մնալ ապօրինի կերպով ձեռք բերված ակտիվների բռնագանձումից, եթե դա կարող է «անարդարացի վնաս» պատճառել ներգրավված կողմերին: Բռնագրավման այսպիսի համապարփակ դրույթը ձեռնառու է բռնագրավման գրեթե բոլոր ձևերին՝ և՛ քրեական կարգով, և՛ ոչ քրեական կարգով:

3.8. Արժեքի վրա հիմնված բռնագանձում (Համարժեք արժեքի բռնագանձում)

Արժեքի վրա հիմնված բռնագանձումը վերաբերում է ապօրինի գործունեության արդյունքում ձեռք բերված ակտիվներին համարժեք ակտիվների բռնագրավմանը: Որոշ երկրներում դա կարող է կիրառվել, երբ համարժեք ակտիվներն անմիջականորեն կապված չեն հանցագործության հետ, որի համար մեղադրվում է հանցագործը, սակայն այս կամ այն ձևով կապված են հանցավորության հետ, օրինակ՝ ընդլայնված բռնագրավման վերաբերյալ որոշմամբ: Համարժեք ակտիվների բռնագրավման մասին ներկայացված է Միավորված ազգերի կազմակերպության Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի կոնվենցիայի 12(1)(ա) հոդվածում:¹⁰³

Որոշ իրավական համակարգերում դատարանը կարող է պահանջել դատախազներից ապացուցել, որ նրանք գործադրել են ողջամիտ ջանքեր՝ բացահայտելու հանցավոր գործունեության հետ կապված ակտիվները, սակայն չեն կարողացել դրանք գտնել: Որպես այլընտրանք, դատարանը կարող է պահանջել ապացույցներ ներկայացնել, որ ամբաստանյալը ծախսել կամ այլ կերպ տնօրինել է ակտիվները, օրինակ՝ մոլախաղերում դրանք տանուլ տալով: Սակայն, գնալով ավելի շատ իրավական համակարգեր վերացնում են այս պահանջը: Օրինակ՝ դատավավճիռը կայացնելուց հետո դատարանը կարող է պարզապես որոշում կայացնել՝ պահանջելով բռնագրավել ամբաստանյալին պատկանող ցանկացած գույք՝ մինչև ապօրինի ձեռք բերված գույքի գնահատված արժեքին հասնելը՝ անկախ նրանից՝ առկա են անմիջական ապացույցներ, որ այդ ակտիվները ձեռք են բերվել հանցավոր գործունեության արդյունքում, թե ոչ:¹⁰⁴

Այս համատեքստում, արժեքի վրա հիմնված բռնագանձումն առնվազն թելադրված է բարոյական հրամայականով, այն է՝ զրկել ամբաստանյալին ապօրինի ձեռք բերված ակտիվները ծախսելու կամ այլ կերպ տնօրինելու հնարավորությունից՝ օրինական ճանապարհով ձեռք բերված ակտիվները բռնագրավելով: Բնականաբար, արժեքի վրա հիմնված բռնագանձումը կարող է զուգակցվել այլ միջոցների հետ, օրինակ՝ մինչդատական համաձայնագրի կնքում (հաշտեցում): Ամբաստանյալը կարող է համաձայնել գույքը (օրինական կամ ոչ օրինական ճանապարհով ձեռք բերված) հանձնել պետությանը՝ գործի կարգավորման դիմաց: Ըստ ԵՄ-ի՝ առանց մեղադրական դատավճռի (NCB) բռնագրավման մեխանիզմի ներդնումը, օրինակ՝ արժեքի վրա հիմնված բռնագրավման, ինչպես նաև իրավախախտումների շրջանակի ընդլայնումը, որոնք կարող են լուծվել այսպիսի մեխանիզմներով, թույլ կտա անդամ պետություններին ավելացնել ապօրինի ձեռք բերված ակտիվների վերադարձի

դեպքերը և ավելի արդյունավետ կերպով պայքարել՝ հանցագործներին զրկելու համար իրենց ապօրինի ձեռք բերված ունեցվածքից:¹⁰⁵

Այնուամենայնիվ, արժեքի վրա հիմնված բռնագրավման թերությունը, ինչպես քրեական իրավունքի վրա հիմնված բռնագրավման այլ ձևերում, նախնական քրեական դատավճռի անհրաժեշտությունն է, որը կարող է ժամանակատար լինել (հաճախ տարիներ տևող), ի տարբերություն քաղաքացիական կարգով բռնագրավման, որի համար սովորաբար պահանջվում է մեկ տարուց պակաս ժամկետ:

Անկախ նրանից՝ իրավական համակարգում առկա է քաղաքացիական կարգով բռնագրավման մեխանիզմը, թե ոչ, ընդհանուր առմամբ, ողջամիտ կլինի լիազորել դատախազներին կիրառել արժեքի վրա հիմնված բռնագրավման պրակտիկան և խրախուսել դատավորներին դրա վերաբերյալ որոշումներ կայացնել:

Թեև արժեքի վրա հիմնված բռնագանձումը պետք է լինի յուրաքանչյուր երկրի քաղաքականության և քրեական արդարադատության պրակտիկայի հիմնարար բաղադրիչը, դրա փաստացի իրականացումը տարբեր իրավական համակարգերում տարբեր է: Ցավոք, որոշ իրավական համակարգեր սահմանափակում են հանցագործությունների թիվը, որոնց նկատմամբ կարող են կիրառվել արժեքի վրա հիմնված բռնագրավման որոշումներ: Մյուսները շարունակում են պահանջել անմիջական կապի ապացույց բոլոր առգրավված ակտիվների և կոնկրետ հանցագործության միջև, ինչը հակասում է հանցագործներին անօրինական ճանապարհով ձեռք բերված ֆինանսական օգուտներից զրկելու բարոյական հրամայականին: Դիտարկենք մի օրինակ, երբ ամբաստանյալն արդեն ծախսել կամ տնօրինել է ապօրինի ձեռք բերված ակտիվները, օրինակ՝ մոլախաղերում դրանք տանուլ տալով, սեքս ծառայությունների կամ թանկարժեք իրերի վրա, որոնք հետագայում անարժեք են դարձել:¹⁰⁶ Արդյո՞ք արդարացի է նման դեպքերում չպահանջել ամբաստանյալի օրինական ճանապարհով ձեռք բերված համարժեք ակտիվները:

Այս տարբեր չափանիշները լուրջ խոչընդոտներ են ստեղծում ակտիվների վերադարձի ոլորտում միջազգային համագործակցության համար և կարող են կտրուկ դանդաղեցնել կամ ամբողջովին անհնարին դարձնել ակտիվների հաջող վերադարձը:

Հասկանալով այս մարտահրավերները՝ ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի կոնվենցիան անդրադառնում է դրանց 12-րդ հոդվածում, որտեղ խրախուսվում է արժեքների վրա հիմնված բռնագրավման պրակտիկայի ընդունումը: Այս պրակտիկայի ընդունումը թույլ կտա ստեղծել ավելի

ներդաշնակ օրենքներ՝ արժեքի վրա հիմնված բռնագրավման վերաբերյալ բազմաթիվ իրավական համակարգերում:¹⁰⁷

3.9. Եզակի գույքի հիման վրա բռնագանձում

Շատ դեպքերում կոնկրետ հանգամանքներից ելնելով՝ կարող է պահանջվել որոշակի գույքի բռնագանձում, օրինակ՝ ապօրինի ձեռք բերված մշակութային ակտիվներ, որոնք հաճախ հեշտ չէ գնահատել դրամական արժեքով, կամ պոստենցիալ անկայուն ակտիվներ (օրինակ՝ վիրտուալ ակտիվներ): Այս դեպքերում ակտիվների բռնագանձումը կարող է հիմնված լինել որոշակի գույքի (օրինակ՝ մշակութային արժեքների, անշարժ գույքի կամ արվեստի գործի) վրա, որը դատաքննության առարկա է, կամ այդպիսի բացառիկ ակտիվների բռնագանձումն ու վաճառքը՝ վճար ստանալու նպատակով՝ դատարանի կողմից սահմանված չափով:¹⁰⁸ Եզակի գույքի վրա հիմնված բռնագրավման պրակտիկան կարող է կիրառվել՝ հանցավոր գործունեության արդյունքում ձեռք բերված գույքը կամ այդ գործունեության համար օգտագործվող գործիքները բռնագրավելու համար:¹⁰⁹

Որոշ իրավական համակարգերում բռնագրավման այս մեխանիզմի համար դեռևս պահանջվում է քրեական դատավճիռ, և այս պրակտիկան հաճախ սահմանափակվում է ամբաստանյալի, մեկ այլ անձի կամ կազմակերպության անունով գրանցված ակտիվները բռնագրավելով, որոնք պետությունն ապացուցել է, որ պատկանում են ամբաստանյալին: Այնուամենայնիվ, որոշակի գույքի և դրա հիմքում ընկած հանցագործության միջև կապը գտնելը կարող է խնդրահարույց լինել: Հանցագործները հաճախ թաքցնում կամ քողարկում են նման ակտիվների ապօրինի ծագումը՝ դրանք փոխակերպելով, փոխանցելով կամ օրինական ակտիվների հետ խառնելով: Բացի այդ, որոշ ակտիվների համար կարող է անհետացման վտանգ լինել:¹¹⁰ Նույնկերպ դժվար է ապացուցել, որ ամբաստանյալը այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձի անունով գրանցված ակտիվի փաստացի «իրական սեփականատերն» է, քանի որ փողերի լվացման մեջ ներգրավված անձինք սովորաբար խուսափում են իրենց անունով գրանցել սեփականությունը:

Գողացված կամ թալանված մշակութային արտեֆակտների վերադարձն իրենց ծագման երկիր գնալով ավելի դժվար է դառնում: Պատերազմներից կամ գաղութատիրությունից ավերված երկրները հանդես են գալիս թանգարաններում կամ մասնավոր հավաքածուներում պահվող մշակութային արժեքների սեփականության նկատմամբ իրավունքի պաշտպանության և դրանց վերադարձի օգտին: Իրավապահ մարմինները և քաղաքական գործիչները ռեսուրսներ են փոխանցել գողացված ակտիվները վերադարձնելու համար՝ մշակութային ժառանգությունը դիտարկելով

որպես մարդու հիմնական իրավունքներից մեկը: Բացի «մշակույթի դեմ պատերազմ» լինելուց, գողացված արտեֆակտների առևտուրը (օրինակ՝ Սիրիայից և Իրաքից գողացված) ահաբեկչական խմբերի եկամտի հիմնական աղբյուրն են:¹¹¹

«Կնոջ քողածածկ գլխի» Միացյալ Նահանգներ, Լիբիա և Եգիպտոսի մշակութային արժեքների հաջող վերադարձը

